



ՄԵՐ ԱՆԿԻԻՆԵՆ

Կը Սպասենք Պայտընի Խոստումին Իրականացման

Ապրիլ 24, 2020-ին տակալին նախագահի թեկնածու՝ Ծօ Պայտընը հրապարակեց յայտարարութիւն մը ըսելով որ, եթէ նախագահ ընտրուի կը խոստանայ քակցիլ Յայկական Յեղասպանութիւնը ճանաչող բանաձեւին: Ներկայիս Պայտըն դարձած է Սիացեալ Նահանգներու նախագահ ու սրընթաց կերպով գործադրութեան կը դնէ ներքին ու արտաքին քաղաքականութեան, տնտեսական ու ընկերային հարցերուն առնչուող իր բոլոր նախընտրական խոստումները: Այժմ կը մօտենանք Յեղասպանութեան 106-րդ տարելիցին ու լաւատեսութիւն կը տիրէ Յայկական շրջանակներուն մօտ, որ վերջապէս Սպիտակ Տան բնակիչը տէր պիտի կանգնի իր խոստումին ու Ապրիլեան իր պատգամին մէջ պիտի օգտագործէ «ցեղասպանութիւն» եզրը, առանց պահուրտելու «մեծ եղեռն», «ողբերգական դէպքեր» «կոտորածներ» եւ այլ նման որակումներու ետին, որոնք կ'օգտագործուէին իր նախորդներուն կողմէ:

Ամերիկեան Գոնկրէսի անդամներ ու լրատուամիջոցներ այս օրերուն կը յիշեցնեն Պայտընին իր խոստումը յարգելու նշանակութիւնը եւ կարեւորութիւնը: Վերջինը «Լոս Անձելըս Թայմզ» թերթի խմբագրական կազմի հաւաքական գրութիւնն էր, ուր ի միջ այլոց ըսուած է. «Սիացեալ Նահանգներու նախագահ Ծօ Պայտընը հնարաւորութիւն ունի այս ամիս, որ Օսմանեան կայսրութեան հայերու զանգուածային կոտորածէն շուրջ մէկ դար անց, կատարուածը կոչել ճշգրիտ եզրոյթով ցեղասպանութիւն»: Մեծ հեղինակութիւն վայելող թերթը զարմանք կը յայտնէ, որ հայերու հետ տեղի ունեցածը «ցեղասպանութիւն» եզրոյթով անուանելու հարցը նոյնիսկ քննարկման կը դրուի:

Սպիտակ Տան մօտ աղբիւրներ կը յայտնեն, որ Պայտընի վարչակազմը մեծ հաւանականութեամբ պիտի առնէ այդ քայլը ու իրերը կոչէ իրենց անունով: Թրքական կառավարութիւնը լրջօրէն մտահոգուած է այս հարցով ու կ'ըսուի թէ ան գաղտնի դիւանագիտութիւն կը վարէ կանխելու համար Պայտընի կողմէ «Յայոց Յեղասպանութիւն» արտայայտութեան օգտագործումը: Թրքական կողմը Ամերիկեան վարչակազմին նոյնիսկ «խոստացած» է Յայաստանի հետ կարգաւորել իր յարաբերութիւնները եւ պատրաստ է

Թուրքիան Պէտք է Փոխէ Յայաստանի Նկատմանը Յարձակողական Քաղաքականութիւնը, Ըսած է Փաշինեան

Մոսկուա կատարելիք եւ նախագահ Վլատիմիր Փութինի հետ ունենալիք հանդիպումի նախօրեակին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան հարցազրոյց տուած է ռուսաստանեան շարք մը լրատուամիջոցներու: «Ինթըրֆաքս» հետ զրոյցի ընթացքին Փաշինեան ըսած է որ, տարածաշրջանէն ներս ամուր խաղաղութեան հաստատման եւ տնտեսական պատկերի վերականգնման համար Թուրքիան պէտք է փոխէ Հայաստանի նկատմամբ յարձակողական քաղաքականութիւնը:

Փաշինեան նախ յիշեցուցած է, որ հայ-թրքական սահմանը միակողմանիօրէն փակուած է Թուրքիոյ կողմէն 1993 թուականէն ի վեր: Հայաստանը միշտ կողմ եղած է Թուրքիոյ հետ առանց նախապայմաններու յարաբերութիւններու կարգաւորման, սակայն ան մերժուած է Թուրքիոյ կողմէ:

«Անգարայի նման թշնամական քաղաքականութիւնը նոր թափ է ստացել Ատրպէյճանի կողմից Արցախի դէմ 44-օրեայ յարձակման ընթացքում: Մասնաւորապէս, Թուրքիան Ատրպէյճանին ուղղակի ռազմաքաղաքական եւ ռազմատեխնիկական աջակցութիւն է ցուցաբերել՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան գօտի տեղափոխելով նաեւ օտարերկրեայ զինեալ ահաբեկիչներին: Այս համաթեքսթում, ամուր խաղաղութեան հաստատման եւ տարա-



Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան

րապէս, Թուրքիան Ատրպէյճանին ուղղակի ռազմաքաղաքական եւ ռազմատեխնիկական աջակցութիւն է ցուցաբերել՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան գօտի տեղափոխելով նաեւ օտարերկրեայ զինեալ ահաբեկիչներին: Այս համաթեքսթում, ամուր խաղաղութեան հաստատման եւ տարա-

ծաշրջանում տնտեսական պատկերի վերականգնման համար Թուրքիան պէտք է փոխի Հայաստանի նկատմամբ այդ յարձակողական

Հրապարակային Հանդիպում Լրագրող Թաթուլ Յակոբեանի Հետ



Թաթուլ Յակոբեան (աջին) եւ հանդիսավար Գրիգոր Սոլոյեան սաուլիսի ընթացքին

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Քաղաքական Դիւանի կազմակերպութեամբ, Ապրիլ 4-ի երեկոյեան ՀԿԲՄ-ի Փաստօրինայի կեդրոնէն ներս տեղի հրապարակային հանդիպում հայրենի լրագրող Թաթուլ Յակոբեանի հետ: Ան օրերուն ԱՄՆ-ի կարգ մը հայաշատ գաղութներուն մէջ հետաքրքրական հանդիպումներով հանդէս կու գայ իր հեղինակած վերջին հատորի՝ «Մահուան Հովիտ 44 Օրեայ Աղէտ» խորագիրը կրող եւ Արցախի վերջին պատերազմի մասին պատմող հրատարակութեան առթիւ: Թաթուլ Յակոբեան հեղինակն է նաեւ «Հայերը եւ Թուրքերը», «Կանաչ Ու Սեւ», «Armenians and Turks», «Karabagh

Diary Green and Black» գիրքերուն: Համաճարակի պատճառով ներկաներու թիւը սահմանափակուած էր, սակայն առիթ ստեղծուած էր ասուլիսին մասնակցելու եւ հարցեր ուղղելու առցանց եւ կամ դիտելու ընկերային հարթակներու միջոցաւ: Հանդիպումին ներկայ էին ՄԴՀԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ Տօքթ. Համբիկ Սարաֆեան, Կլենտոն Գրաքապետ Վրէժ Աղաճանեան, ինչպէս նաեւ հայ մամուլի, հեռատեսիլի եւ քոյր կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Գոնկրէսականները Կոչ Կ'ընեն 100 Միլիոն Տոլարի Օգնութիւն Տրամադրել Հայաստանին Եւ Արցախին

Ամերիկեան Գոնկրէսի Հայկական Հարցերու Յանձնախումբը կոչ ըրած է աւելի քան 100 միլիոն տոլարի օգնութիւն յատկացնելու Հայաստանին եւ Արցախին՝ հաշուի առնելով այն իրավիճակը, որ ստեղծուած է անցեալ տարի Թուրքատրպէյճանական աւերիչ յարձակումներէն ետք:

Գոնկրէսականներու նամակով ըսուած է, որ օգնութիւնը անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան՝ տունները վերականգնելու, աշխատատեղերը վերակառուցելու, սննդային անվտանգութիւն ապահովելու, դեղերու, ջուր մատակարարելու եւ այլ առաջնահերթ խնդիրներ լուծելու համար:

Հայամէջ Գոնկրէսականները կ'առաջարկեն, ի մասնաւորի, 2 միլիոն տոլար ուղղել Լեռնային Ղարաբաղի մէջ պայմանական զէնքի ոչնչացման ծրագիրին, 100 միլիոն տոլար՝ Պետական Գրասենեակի եւ USAID-ի միջոցով Հայաստանին տնտեսական, կառավարման, օրէնքի գերակայութեան եւ անվտանգութեան ոլորտներու աջակցութեան:

Գոնկրէսականները կոչ կ'ընեն նաեւ դադրեցնելու ամէն տեսակի ֆինանսական օգնութիւն Ատրպէյճանին, քանի որ դեռ երաշխաւորուած չէ Հայաստանի եւ Արցախի դէմ յարձակումներու դադրեցումը:

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Արտահերթ Ընտրութի՞ն, Թե՞ Հայաստանի Ընտրութիւնը

ԱՐԱՍ ԱՄՍՏՈՒՆԻ

Հայաստանում արտահերթ ընտրութեան մասին խօսելիս պէտք է աներկբաջ ամրակցել յաւելումը՝ արտահերթ բովանդակային ընտրութիւն, որովհետեւ, երբ մենք դիտարկում ենք ներկայիս քաղաքական դաշտը, ուժերի յարաբերակցութիւնն ու գոյները, ապա իրաւամբ առաջանում է հարց՝ իսկ ի՞նչ է փոխուելու այս կամ այն ուժերի տեղերով փոփոխութիւնից յետոյ: Այդ հարցը գոնէ առայժմ չունի շոշափելի պատասխան, որովհետեւ գոնէ առայժմ Հայաստանում ներքաղաքական կեանքը շարունակում է լինել բովանդակազուրկ, դրանում շարունակում է բացակայել հանրութեան վստահութեան համար կոնկրետ առաջարկներով ու գաղափարներով մրցակցութիւնը:

Միեւնոյն ժամանակ, իր հերթին այդ հարցում գործ ունի անելու հանրութիւնն ինքը, իհարկէ, հանրային հարթութիւնում գործունէութիւն ծաւալող տարբեր անհատների եւ խմբերի, տարբեր ինստիտուտների միջոցով: Հանրութիւնը պէտք է գաղափարական, բովանդակային, ծրագրային քաղաքական պայքարի եւ մրցակցութեան, այսպէս ասած, պասիւ պահանջի ռեժիմից անցնի պահանջի ակտիւ, նախաձեռնող ռեժիմի: Հակառակ դէպքում, քաղաքական դերակատարների ճնշող մեծամասնութիւնն ինքը չունի փոխուելու մտաւարկ: Հանրութիւնն ինքը պետք է սկսի փոխել քաղաքականութիւնը, որովհետեւ միեւնոյն է այդ քաղաքականութիւնը իրենք կայ, շարժում է՝ հանրութեամբ, թէ՛ առանց դրա: Ըստ այդմ, այստեղ ընտրութիւնը մեծ չէ՝ թողնել այդ վիճակի ինքնահոս շարունակութիւն, թէ՛ այդուհանդերձ մտածել կառավարելու մասին: Սա խնդիր է, որն, իհարկէ, ինքն էլ չի լուծում ինքնահոս կերպով, եւ պէտք է գտնուեն այն լուծելու պատրաստ, ցանկութիւն եւ կարողութիւն ունեցող խմբեր, շրջանակներ, որոնք անմիջապէս քաղաքականութեան մէջ չեն, որոնք չունեն քաղաքականութեամբ զբաղուելու յաւակնութիւն, բայց որոնց համար, մեղմ ասած, միեւնոյն չէ, թէ ինչ տեսակի քաղաքականութիւն է զբաղուում պետութեան եւ, ըստ այդմ, նաեւ իրենց ճակատագրով:

Որն է լինելու նախընտրական Հայաստանի օրակարգը: Ընդհանրապէս, Հայաստանի օրակարգի թեման առ այսօր խեղդուել է քաղաքական տարբեր ուժերի, մասնաւորապէս, եւ յատկապէս արմատական ընդդիմադիր ուժերի նախաձեռնած փողոցային պայքարի աղմուկի մէջ: Աղմուկ, որը յենուել է բացառապէս զգայական իրողութիւնների եւ գործօնների վրայ, որոնք եղել են պատերազմի ծանր հետեւանքով՝ հազարաւոր երիտասարդ զոհեր եւ տարածքային կորուստներ: Մինչդեռ, հենց այդ հանգամանքն էլ աւելի սուր է դարձրել Հայաստանում ռացիոնալ օրակարգի ձեւաւորման անհրաժեշտութիւնը, որովհետեւ Հայաստանն ունի առաւելագոյն արագութեամբ վերականգնուելու կարիք: Բայց դրուած է եղել առաւելագոյն արագութեամբ ոչ թէ՛ Հայաստանը, այլ իշխանական կորուսեալ դիր-

քերը եւ կարգավիճակը վերականգնելու խնդիր: Եւ քանի որ այդ նպատակը ունեցող ուժերը չեն ունեցել ռեսուրսի խնդիր, ահա լի ռեսուրսներ են դրուել ռացիոնալ օրակարգերը խեղդելու, աղմուկի տակ թողնելու համար: Որովհետեւ ռացիոնալ օրակարգի շուրջ խոսակցութեան պարագայում հնարաւոր է լրոգել Հայաստանի պարտութեան համար սեփական պատասխանատուութիւնն ու այն բարդել միայն ու միայն գործող իշխանութեան ու վարչապետի վրայ:

Ըստ այդմ, պէտք է ենթադրել, որ այդ մարտավարութիւնը շարունակելի կամ նախընտրելի է լինելու նաեւ ընտրական շրջանում: Մինչդեռ, Հայաստանն այսօր ունի մի շարք առանցքային հարցերի պատասխաններ ձեւակերպելու անհրաժեշտութիւն, որոնք վերաբերում են ներքին հարցերին եւ արտաքին ռազմա-քաղաքական խնդիրներին: Այդ իմաստով, եթէ խօսում ենք Հայաստանի համար անհրաժեշտ նախընտրական օրակարգի մասին, ապա դրանում գերակշռող եւ առաջնային պէտք է լինեն ոչ թէ «դաւաճանը» կամ «թուրքը», այլ տնտեսական խնդիրները, տնտեսական քաղաքականութիւնը, ներդրումային գրաւչութիւնը, կոնկրետ գործիքների շուրջ քննարկումն ու մրցակցութիւնը: Այդ համատեքստում, Հայաստանը թերեւս պէտք է ստանայ լայն հարցերի պատասխան՝ ի վերջոյ, մենք, որպէս պետականութիւն, ընտրում ենք առաջ գնալու փափկ, թէ՛ բաց ռեժիմը, ընտրում ենք ռեզիոնալ երկխօսութեան պատկերացումը՝ հասկանալով, որ այդ երկխօսութիւնը ինքնին շատ բարդ խնդիր է, թէ՛ մտում ենք փակ ռեժիմով, առաւելապէս ապաւինելով Ռուսաստանի հովանուն եւ մնացեալ ուղղութիւններով մեր քայլերը համաձայնեցնում ենք Ռուսաստանի հետ, մեր փոխարէն, փաստորէն, նրան պատուիրակելով ռեզիոնալ քննարկումների մանդատը: Որովհետեւ, հնարաւոր է պահել մանդատը, բայց մնալ դիրքում, երբ Ռուսաստանն ինքը ազատօրէն պայմանաւորում է թուրքերի, ատրպէյճանցիների, իրանցիների, անգամ վրացիների հետ՝ կայ ռուս-վրացական ուղիւ բանակցութիւն, իսկ մենք մտում ենք կանգնած կողքի:

Հայաստանը դիտարկու՞մ է թուրքիայի եւ անգամ Ատրպէյճանի հետ խօսելու հնարաւորութիւն, թէ՛ բացառում այն, կամ դիտարկում միայն շատ կոշտ պայմաններով՝ Արցախի ճանաչում եւ տարածքների դէ օկուպացիա: Ընտրութեան մասնակիցները պէտք է պատասխանեն այդ հարցերին, այդ համատեքստում դուրս գալով նաեւ աւելի լայն՝ աշխարհաքաղաքական հարթութեան խնդիրների վրայ: Ինչպէ՞ս են պատկերացում Հայաստանի քաղաքական ուժերը Հայաստանի դերն այդ հարթութիւնում՝ հաշուի առնելով նոր իրողութիւնները եւ դրանցից բխող անհրաժեշտութիւններն ու մինչ այդ ունեցած հնարաւորութիւնների կորուստը: Ինչպիսիք են քաղաքական ուժերը դիտարկում Հայաստանի միջազգային սուբիեկտութեան իրացման հնարաւորու-

Չհատենք Կործանման Եզրագիծը

ՎԱՐԴԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Մեր ճակատագրական սխալները՝ մեր ու մեր հակառակորդի ուժերն ու հնարաւորութիւնները համադրել չկարողանալը, հնարաւորի փոխարէն ամէն ինչ եւ աւելին ունենալու մարմաջը, մեր անպատասխանատու ու վայրկիւրոյ վերաբերմունքն աշխարհին ու հարեւաններին բերեցին մեզ այս եզրագիծ, որից այն կողմ կործանումն է: Սա հափազանցութիւն չէ: Սա մեր իրականութիւնն է:

Այս ճակատագրականութիւնը հասկանալու համար ընդամէնը պէտք է 44-օրեայ պատերազմից ու Զախ-Չախիչ պարտութիւնից յետոյ ստեղծուած իրավիճակը, մեր հարեւանների ազդեհիւ նկատմանը եւ մեր տարածաշրջանի քարտէզը համադրել, ինչից չի կարող ակնյայտ չդառնալ այն մեծ վտանգը, որ կախուած է մեր գլխին:

Մեր անմիջական հարեւաններ Ատրպէյճանը եւ Թուրքիան եղբայրական ժողովուրդներ են: Նրանց շահերը համընկնում են եւ, շատ առումներով, հակասում մեր շահերին: Պատմութիւնը մեր այս երկու հարեւանների հետ մեզ փոխյարաբերութիւնների ծանրագոյն բեռ է փոխանցել: Եթէ մենք շարունակենք կքած մնալ անցեալի, շատ դէպքերում, անասելի ցաւոտ բեռի տակ, եթէ շարունակենք ապագայ մեր փոխյարաբերութիւնները պայմանաւորել պատմութեան փոխանցած բեռով՝ կը մնանք անցեալի գերին: Եթէ ապագային միտուած քայլեր անելու փոխարէն փորձենք անցեալից ժառանգուած չլուծուած ու անլուծելի խնդիրները լուծել՝ անցեալում էլ կը մնանք:

Մեր այս հարեւանների հետ պէտք է կարողանանք նոր որակի յարաբերութիւններ սկսել: Ընդհանուր եզրեր գտնել: 1990-ականների վերջերին շատ բան կարելի էր փոխել: Պատմութիւնը տուել էր մեզ այդ հնարաւորութիւնը՝ օգտուել չկարողացանք: Այսօր՝ այս պատերազմից ու այս պարտութիւնից յետոյ մեզ համար շատ աւելի բարդ է:

Առաջարկելու ոչինչ չունենք: Մեր մեղքով, մեր արկածախնդրութեան պատճառով կորցրեցինք այն, ինչ կարող էինք գիշել երէկ եւ փոխարէնը ստանալ: Այսօր մեր ձեռքին արժէքաւոր խաղաքարտեր չկան: Մենք նոյնիսկ խաղասեղանի մօտ չենք: Մեր շահերը ներկայացնելու ու պաշտպանելու հնարաւորութիւն չունենք: Սահել է հողը մեր ոտքի տակից:

Բայց սա վերջակէտ չէ: Եթէ ճիշտ ու հեռահար հաշուարկներ անենք, եթէ խելամիտ լինենք, եթէ պատասխանատու լինենք, եթէ ընթացող զարգացումների հոսքում կարողանանք մեզ ճիշտ դրսեւորել՝ ուժ կը հաւաքենք՝ գրուցակից կը դառնանք, մեզ հետ հաշուի կը նստեն:

Կը շարունակե՞նք աշխարհի ու մեր հարեւանների մասին երէկուայ ու այսօրուայ պատկերացումներով առաջնորդուել, մնալ անցեալի կաղապարներում՝ կունենանք էլ աւելի վատ իրավիճակ: Տարածաշրջանում որեւէ դերակատարում չենք ունենալ, անիմաստ գլխացաւանք ու խանգարող հանգամանք կը դառնանք, որի չլինելը բոլորի սրտով է լինելու:

Պէտք է տարածաշրջանային խաղացող դառնանք: Այդպիսին էինք մինչեւ 2020 թուականի աշուն: 44 օրեայ պատերազմի ընթացքում չկարողացանք մեր այդ դիրքը պահպանել: Բայց կարող ենք վերագտնել մեզ: Դրա համար առաջին հերթին պէտք է իշխանութեան դեկին եղած մարդիկ լինեն իրականութեանը համարժէք: Պէտք է լինեն պատասխանատու: Պէտք է պետական մտածողութիւն, պետութեան ամրապնդման ու հզորացման իրատեսական ու իրականանալի ծրագիր ունենան:

Այսօրուայ իշխանաւորները նման բարդագոյն խնդիր լուծել չեն կարող: Ասենք՝ նրանք նման ձգտումներ էլ չունեն: Սահմանների բացման եւ տարածաշրջանային զարգացումներին մասնակցելու մասին նրանց մակերեսային խօսքը պարապ գրոյցի ոլորտից է, պարզունակ քարոզչական հնարք, որ երկրի ներսում միայն հակադրեցութեան է առաջացնում:

Ունենային նման ծրագիր՝ 2018-ի Մայիսից մինչեւ 2020-ի Օգոստոս ընկած հատուածում, երբ Հայաստանը բոլորովին այլ կարգավիճակ ունէր, իրենք էլ ունէին ժողովրդի վստահութիւնը՝ կը փորձէին կենսագործել: Փոխարէնը՝ ապաշնորհ ու անկարող գտնուեցին, մսխեցին ե՛ւ իրենց նկատմամբ եղած վստահութիւնը, ե՛ւ տարիների մեր ձեռքբերումները:

Ո՞վ մնալու է իշխանութեան, ո՞վ լինելու է իշխանութիւն՝ մի բան պէտք է իմանայ, եթէ ոչ այսօր,

Շար.ը էջ 18



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՉԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՐԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social
 Democratic Hunchakian Party
 of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in
 US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Հայաստանի Ընտրութիւնները Պիտի Կայանան Պարզ Համաձայնական Ընտրակարգով

ՀՀ ազգային ժողովը երկրորդ ընթացակարգով եւ ամբողջութեամբ ընդունեց «Հայաստանի Հանրապետութեան ընտրական օրէնագիրք» սահմանադրական օրէնքի փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու մասին օրէնքի նախագիծը, որով կը նախատեսուի ընտրութիւններէն առաջ հանել վարկանշային ցուցակները եւ ընտրութիւնները կայացնել պարզ համամասնական ընտրակարգով: Նախագիծը քուէարկութեամբ ստացաւ 82 կողմ ձայն:

Հիմնական զեկուցող Վահագն Յովակիմեան յայտնեց, որ ԱԺ պետական իրաւական հարցերու յանձնաժողովի նիստին հաւանութեան արժանացած է նախագիծին՝ իր կողմէ լրամշակուած տարբերակը: Նախագիծէն հանուած են «Քորոնա» ժաշկով պայմանաւորուած փոփոխութիւններու առաջարկները: «Նախագահի աշխատակազմի մեր գործընկերներին կողմից արդէն իսկ մեզ տեղեկացուել է, որ «Քորոնա» ժաշկի կարգաւորումներին հետ կապուած իրենք խնդիրներ են տեսնում: Այդ իսկ պատճառով ընդառաջ գնալով՝ բոլոր այդ կարգաւորումներին, որոնք պէտք է լինէին Ընտրական օրէնագրքում, մենք հրաժարուել ենք», - ըսաւ պատգամաւորը ու աւելցուց, որ նախագիծին մէջ կատարած են նաեւ որոշակի շտկումներ:

Այսպիսով՝ նախագիծով կը նախատեսուի հանել վարկանշային

ցուցակները: Այս փոփոխութենէն ետք, քաղաքացիին իր ընտրատեղամասին մէջ պիտի ընտրէ միայն քաղաքական ուժը: Այսինքն՝ քուէարկութիւններէն պիտի ընտրէ մէկ քուէարկութիւն եւ առանց որեւէ նշում կատարելու, պիտի դնէ ծրարի մէջ ու նետէ քուէատուփը:

Նախագիծի համահեղինակներն են, խմբակցութիւններու մէջ չընդգրկուած պատգամաւորներ՝ Արման Բաբաջանեան, Սերկէյ Բազրատեան, «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւորներ՝ Վահագն Յովակիմեան եւ Համագապ Դանիէլեան:

Մինչեւ այդ եւս կը գործէր համամասնական ընտրակարգ, սակայն վարկանշային համակարգի համադրութեամբ՝ այսինքն՝ վարկանշային ցուցակներով:

Ընդգրկմաւոր «Լուսաւոր Հայաստան» խմբակցութիւնը կտրականապէս դէմ էր այս փոփոխութեան: ԼՀԿ-ն կ'առաջարկէր բաց ցուցակներու տարբերակը՝ միեւնոյն ժամանակ շեշտելով, որ գործընթացի կէսէն՝ այսինքն ընտրութիւններու մասին պայմանաւորուածութենէն յետոյ խաղի կանոնները չեն փոխուիր:

Իշխանութիւնը վստահեցուցած է, որ այս փոփոխութեամբ ընդամենը աւելի պարզ կը դառնայ ընտրութիւններու ընթացքը:

ԱԺ-էն ներս նախագիծը ընդունուելէն յետոյ, կը նախատեսուի, որ պէտք է ստորագրուի Հանրապետութեան նախագահի կողմէ:

Քոչարեանին Առաջադրուած Սահմանադրական Կարգը Տապալելու Քրեական Գործը Կարճուեցաւ

2,5 տարի մեղադրեալի կարգավիճակի մէջ գտնուող երկրորդ նախագահ՝ Ռուպերթ Քոչարեանին առաջադրուած սահմանադրական կարգը տապալելու յօդուածով քրեական գործը կարճուեցաւ:

Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանի դատաւոր՝ Աննա Դանիբեկեան բաւարարեց Քոչարեանի պաշտպաններու միջնորդութիւնը եւ ընթերցեց իր որոշման եզրափակիչ մասը, ըստ որում հակասահմանադրական ճանաչուած յօդուածով քրեական հետապնդումը դադարեցուցաւ:

Ընդդիմութեան Հանրահաւաքին Հնչեցին Արտահերթ Ընտրութիւնները Պոյթթելու Կոչեր

«Հայրենիքի փրկութեան շարժումը» Ապրիլ 6-ին, Սեւան քաղաքի մէջ կազմակերպուած հանրահաւաքին, մեկնարկեց մարզային այցելութիւնները:

Շաբաթներ շարունակ Երեւանի Բաղրամեան պողոտան ու Դեմիրճեան փողոցը փակող շարժումը, նախորդ շաբաթավերջին յայտարարած էր, որ կը սկսի մարզային այցելութիւնները:

Սեւան եկած էին Հայրենիքի փրկութեան շարժումը համակարգող՝ Իշխան Սողոմոնեան, շարժման վարչապետի թեկնածու՝ Վազգէն Մանուկեան, նախկին վարչապետ՝ Հրանտ Բազրատեան եւ Պաշտպանութեան նախկին նախարար՝ Սէյրան Օհանեան:

Հանրահաւաքի քանի մը հարիւր մասնակիցները, որոնցմէ շատերուն ձեռքը «Նիկոլ դաւաճան» գրութեամբ պատասխաններ կային, պարբերաբար կը վան-

տապնդումը դադարեցուցաւ:

Մօտաւորապէս երկու շաբաթ առաջ, Սահմանադրական դատարանը (ՍԴ) հակասահմանադրական եւ անվաւեր ճանչցաւ Ռուպերթ Քոչարեանին եւ անոր նախկին երկու ենթականերուն մեղսագրուող սահմանադրական կարգը տապալելու մասին յօդուածը: Անկէ ետք Քոչարեանի փաստաբանները միջնորդեցին դատարանին այդ մեղադրանքով հետապնդումը դադարեցնել եւ գործը կարճել:

Կարկէին «Առանց Նիկոլ Հայաստան»:

Հանրահաւաքի հարթակէն հնչեցին արտահերթ խորհրդարանական ընտրութիւնները պոչթոթելու կոչեր: Մասնաւորապէս, Հրանտ Բազրատեան կոչ ըրաւ շմասնակցելու առաջիկայ ընտրութիւններուն, ընել ամէն ինչ, որ Նիկոլ Փաշինեան հեռանայ ասպարէզէն:

Հանրահաւաքէն առաջ, «Ազատութիւն»ի հետ զրոյցի ընթացքին, Իշխան Սողոմոնեան այն դիտարկման, որ Ռուսաստանեան 1-ին հեռատեսիլային կայանի եթերով Ռուպերթ Քոչարեան յայտարարած է, թէ արտահերթ ընտրութիւններուն պիտի մասնակցի 2-3 կուսակցութիւններու դաշինքով, եւ այն հարցին, թէ արդեօք Դաշնակցութիւնը մաս պիտի կազմէ այդ դաշինքին՝ պատասխանեց, որ առայժմ որոշուած չէ:

ԼՀԿ-ական Պատգամաւոր. Որեւէ Պատրուակ Պիտի Չտանք Իշխանութեան, Որ Նահանջ Ըլլայ Ընտրութիւններու Օրակարգէն

ՀՀ ազգային ժողովի «Լուսաւոր Հայաստան» խմբակցութիւնը, խոստացածին համաձայն, վարչապետի հրաժարականէն ետք, պիտի չառաջադրէ վարչապետի թեկնածու, որ առաջիկային կայանան արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ, առիթ պիտի չտայ իշխանութեան, որ ետքայլ ընէ այդ օրակարգէն:

«Արմէնփրես»-ի հարցումամբ՝ այս մասին ԱԺ-էն ներս լրագրողներու հետ զրոյցի ժամանակ ըսած է խմբակցութեան պատգամաւոր՝ Անի Սամսոնեան՝ անդրադառնալով հարցին, թէ այն պարագային, երբ առանց ԼՀԿ-ի համաձայնութեան՝ Ընտրական օրէնագիրքին մէջ փոփոխութիւններ եղան, հնարաւոր է ԼՀԿ-ն ընտրութիւններու կայացման առնչութեամբ իշխանութեան հետ պայմանաւորուածութիւններէն ետ կանգնի եւ առաջադրէ վարչապետի թեկնածու:

«Մեր միակ պայմանաւորուածութիւնը եղել է այն, որ վարչապետը հրաժարական կու տայ, եւ մենք կը գնանք արտահերթ ընտրութիւններին: Եւ, եթէ գնում ենք արտահերթ ընտրութիւններին, ես կարծում եմ՝ տրամաբանական չէ այլ գործողութիւններ իրականացնել, երբ կայ յստակ պայմանաւորուածութիւն», - ըսած է Սամսոնեան:

Ան վստահեցուցած է, որ Ընտրական օրէնագիրքի շուրջ վարչապետի հետ պայմանաւորուածութիւն չէ եղած, վարչապետի կողմէն ըսուած է միայն, որ եթէ համաձայնութիւն չըլլայ խորհրդարանէն ներս, չեն ընդունիր, բաց յստակ



Պատգամաւոր՝ Անի Սամսոնեան

պայմանաւորուածութիւն չէ եղած, որ կրնար խախտուիլ: «Մենք որեւէ պատրուակ չենք տալու իշխանութեանը, որ որեւէ պահից ետքայլ կամ նահանջ լինի այս օրակարգին», - ըսած է Սամսոնեան:

ԼՀԿ-ը այս ընտրութիւններուն պիտի ձգտի առաւելագոյնին, իշխանութեան հասնելու համար: «Իւրաքանչիւր առողջ քաղաքական ուժ, որը գնահատում է իր հնարաւորութիւնները, միշտ ձգտում է առաւելագոյնին: Մենք չենք գնում այս ընտրութիւններին մի քանի պատգամաւորական տեղեր վերցնելու համար: Հետեւաբար, բոլոր մեր հնարաւորութիւնները պէտք է օգտագործենք», - ըսած է ան ու կարծիք յայտնած, որ իւրաքանչիւր քաղաքական ուժի առաջադրանքը պէտք է ըլլայ չկողմնորոշուած մարդոց համոզել, որ գիրենք ընտրեն:

Սահմանադրական Կարգի Դեմ Ուղղուած Կոչեր Ընող Կուսակցութիւններու Գործունէութիւնը Պէ՞տք է Կասեցուի

Անկախ պատգամաւոր՝ Արման Բաբաջանեան առաջարկած է կասեցնել այն կուսակցութիւններու գործունէութիւնը, որոնք կը քարոզեն ՀՀ Սահմանադրութեան 1-5-րդ յօդուածներով կամ 6-րդ յօդուածի առաջին մասով նախատեսուած որեւէ նորմի խախտում: Ըստ հիմնաւորման՝ այդ նորմերու փաստացի վերացման ուղղուած հրապարակային կոչը՝ իշխանութիւնը գրաւելու, տարածքային ամբողջականութիւնը խախտելուն կամ սահմանադրական կարգը տապալելուն ուղղուած, կասեցման հիմք կրնան ըլլալ: Առաջարկուած է փոփոխութիւն կատարել նաեւ Քրեական օրէնագրքին մէջ, որ կ'առաջարկէ ենթարկել մեղաւորները քրեական պատասխանատուութեան:

Իրաւապաշտպան՝ Արթուր Սաքունց «Առաջին Լրատուականի» հետ զրոյցի ընթացքին ըսաւ, որ կուսակցութիւններու գործունէութեան վերջնական կասեցումը կրնայ ըլլալ միայն Սահմանադրական դատարանի կողմէ եւ Սահմանադրական դատարանի որոշումով, բաց զազապարը ինքնին ընդունելի է, քանի որ բոլոր այն կուսակցութիւնները, որոնք սահմանադրութեան դրոյթներու դէմ պիտի գործեն, բռնութեան, ատելութեան, ժողովրդավարութեան, մարդու իրաւունքներու արժէքներու, ինքնիշխանութեան դէմ ուղղուած կոչեր պիտի ընեն, կոչ պիտի

ընեն իշխանութիւնը բռնի կերպով գրաւելու մասին, ուրեմն անոնց գործունէութիւնը պէտք է կասեցուի, իսկ նման կոչեր ընողները ենթարկուին քրեական պատասխանատուութեան:

Ըստ վարդինէ Գրիգորեանին, որ կուսակցութիւններու մասին օրէնքի վերջին փոփոխութիւններու աշխատանքներուն աշխոյժ մասնակցութիւն ունեցած է եւ օրէնքի նախագիծին վրայ աշխատած, Սահմանադրութեամբ արդէն իսկ նորմ կայ ամրագրուած, որ կը նախատեսէ, որ սահմանադրական կարգի տապալման համար կուսակցութիւններու գործունէութիւնը կրնայ կասեցուիլ: Սահմանադրութիւնը կը նախատեսէ, որ այն կուսակցութիւնները, որոնք կը քարոզեն սահմանադրական կարգի բռնի տապալում, կամ բռնութիւն կը կիրառեն սահմանադրական կարգը տապալելու նպատակով՝ հակասահմանադրական են եւ ենթակա են արգելման սահմանադրական դատարանի որոշումով: Փաստացի այս այն միակ հիմքն է, որով կուսակցութիւններու գործունէութիւնը կրնայ կասեցուիլ, սակայն խնդիրը կիրառման մեքենակաւորութիւններու հետ է, երբ յստակութիւն չկայ՝ կուսակցութիւնը նման կոչ կ'ընէ, թէ անձը, որ այդ կուսակցութեան մէջ է. «Դա իրականում շատ բարդ է, երբ պարզ չէ՝ յանցագործութիւնը պէտք է վերագրել յստակ մարդու, թէ կուսակցութեանը»:

ԼՈՒՐԵՐ

Արայիկ Յարութիւնեան. օրակարգին Կրայ Է Արցախի Տարածքային Անրողականութեան Կերականգնումը Քաղաքական Ծանապարիով

Արցախի Հանրապետութեան նախագահ՝ Արայիկ Յարութիւնեան Մարտ 31-ին աշխատանքային այցելութիւն կատարած է Մարտունիի շրջան եւ հանդիպումներ ունեցած է Մարտունի քաղաքի եւ Բերդաշէն, Աշան, Նոր շէն, Հացի, Աւդուռ ու Միւրիշէն համայնքներուն մէջ: «Արմէնփրէս»-ին այս մասին յայտնեցին Արցախի Հանրապետութեան նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխավոր վարչութեանէն:



Արցախի Հանրապետութեան նախագահ՝ Արայիկ Յարութիւնեան

կանգնումը քաղաքական ճանապարհով, առնուազն նախկին ԼՂԽՄ-ի (Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ) սահմաններէն ներս:

Հանդիպումներու ընթացքին նախագահը նաեւ պատասխանած է բնակչութեան յուզող հարցերուն:

Երկրի ղեկավարը իր խօսքին մէջ անդրադարձած է անվտանգութեան ու ընկերային հիմնախնդիրներու յաղթահարման եւ տնտեսութեան զարգացման հարցերուն: Անդրադառնալով մամուլով պարբերաբար շահարկուող կարմիր շուկայի թեմային՝ Հանրապետութեան նախագահը անգամ մը եւս շեշտած է, որ այսպիսի խօսակցութիւններ որեւէ հիմք չունին եւ, ընդհակառակը, ԱՀ իշխանութիւններու օրակարգին վրայ է Արցախի տարածքային ամբողջականութեան վերա-

ԱՄՆ, Չինաստան եւ Սպանիա Առաջատարներն են Հայաստանին Տրամադրած Իրենց Մարդասիրական Օգնութիւններով



Մարդասիրական օգնութեան կարգով 2021-ի Յունուար-Փետրուարին Հայաստան ներմուծուած է 312.5 թոն ապրանք, որու արժէքը կազմած է 1 միլիոն 434.3 միլիոն դրամ կամ 2 միլիոն 750.6 հազար տոլար, որ նախորդ տարուայ նոյն ժամանակի նկատմամբ աւելի է 18.9 տոկոսով: «Արմէնփրէս»-ի հաղորդմամբ՝ այս մասին կը վկայեն ՀՀ վիճակագրական կոմիտէի հրատարակած տուեալները:

Հայաստան ուղարկուած են ամէնէն շատ հիւսուածեղէնի իրեր՝ 801.4 հազար տոլարի, այնուհետեւ տարբեր արդիւնաբերական ապրանքներ՝ 553.9 հազար տոլարի, տարրաբանութեան եւ անոր հետ

կապուած արդիւնաբերութեան ճիւղերու արտադրանք՝ 511.8 հազար տոլարի, սարքեր եւ գործիքներ՝ 464.9 հազար տոլարի:

Ընդ որում ամէնէն շատ մարդասիրական օգնութիւն ուղարկողը եղած է Միացեալ Նահանգները՝ 757.5 հազար տոլարի, որ 2020-ի Յունուար-Փետրուարի նկատմամբ աւելի է 94.7 տոկոսով: Անոր կը յաջորդէ Չինաստանը՝ 470.7 հազար դոլարի օգնութեամբ, նախորդ տարուայ նկատմամբ աւելնալով 4 անգամ, որմէ յետոյ՝ Սպանիան՝ 426.8 հազար տոլարի՝ նախորդ տարուայ նոյն ժամանակի համեմատ աւելնալով 115.4 անգամ:

Դատախազութիւնը Մեղադրանք Ներկայացուցած է Միջազգային Ահաբեկչութեան եւ Վարձկանութեան Յօդուածներով Շուրջ 30 Անձի

Պատերազմի ընթացքին գերեվարուած Սուրիոյ քաղաքացիներ՝ Յուսէֆ ալ Ապէտ Հաճիին եւ Մուհամադ Մուհամմատ Ալ Շիբերին աննշտող քրէական գործի նախաքննութիւնը կը մօտենայ աւարտին:

«Նրանց վերաբերեալ գործը

աւարտական փուլում է, կատարուում են վերջին գործողութիւնները: Շուտով կը յայտարարուի նախաքննութեան աւարտ եւ դատախազի կողմից մեղադրական եզրակացութիւնը հաստատելուց յետոյ այն կ'ուղարկուի դատարան ըստ էութեան քննելու համար», - հա-

Պայտրն Հայոց Ցեղասպանութիւնը Պետք է Կոչէ իր Անունով. Los Angeles Times



Միացեալ Նահանգներու նախագահ՝ Ժօ Պայտրն հնարաւորութիւն ունի այս ամիս, որ Օսմանեան կայսրութեան հայերու զանգուածային կոտորածէն շուրջ մէկ դար անց, կատարուածը կոչել ճշգրիտ եզրոյթով՝ ցեղասպանութիւն: Ինչպէս կը հաղորդէ «Արմէնփրէս»-ը, այս մասին ըսուած է Los Angeles Times-ի խմբագրականով:

«Զարմանալի է, որ հայերու հետ տեղի ունեցածը «ցեղասպանութիւն» եզրոյթով անուանելու հարցը նոյնիսկ քննարկման կը դրուի», - գրած է Los Angeles Times-ը, տեղի ունեցածը անուանելով «մարդկութեան դէմ գործուած յանցագործութեան ցաւը պատմութեան ընթացքին աւելի կը տարածուի, քանի որ կառավարութիւնները կը յապաղին ճանաչել զայն»:

Պարբերականը նշած է, որ Հայոց ցեղասպանութեան հետեւանքով, թուրքիա բնակող հայերու թիւը շուրջ 2.1 միլիոնէն նուազած է, եւ դարձած քանի մը հարիւր հազար: Los Angeles Times-ը ընդգծած է, որ թէպէտ թրքական կառավարութիւնը, որ կը շարունակէ հերքել իրագործուած ոճրագործութիւնը, կը պնդէ, թէ կատարուածը պատերազմի հետեւանք էր եւ մահացած են ոչ միայն քրիստոնեայ հայերը, այլեւ հրեաներն ու իսլամներն ալ, սակայն իրականութեան մէջ հայերը թիրախ դարձած են իրենց ցեղի պատկանելիութեան պատճառով:

Համեմատելով հրեաներու դէմ իրագործուած ցեղասպանութեան հետ՝ պարբերականը նշած է, որ այս նոյնն է, եթէ կատարուածը վիճարկուի՝ ըսելով, թէ «ամէն բան այդքան վատ չէ, ուրիշ մարդիկ ալ մահացած են»: «Այդ վիրաւորանքի աստիճանի անհեթեթութիւն է», - գրած է Los Angeles Times-ը:

Պարբերականը նաեւ նշած է, որ թէպէտ թրքական կառավարութիւնը կը շարունակէ յամառօրէն հերքել կատարուածը, աշխարհի շատ երկիրներ արդարացիօրէն ճանչցած են ցեղասպանութիւնը եւ պաշտօնական դիրքորոշում ըն-

դունած եւ տեղի ունեցածը «Հայոց ցեղասպանութիւն» անուանած:

Los Angeles Times-ը նշած է, որ ԱՄՆ-ի պարագային հարցը յատկապէս սուր է, քանի որ ՆԱԹՕ-ի անդամ թուրքիան այդ երկրի համար ռազմական դաշնակից է, թրքական ինժեքըրի մէջ տեղակայուած է ամերիկեան ռազմական: Այդուհանդերձ, թուրք-ռուսական յարաբերութիւններով պայմանաւորուած՝ թուրք-ամերիկեան յարաբերութիւնները վերջին տարիներուն վատացած են: Հետեւաբար, ԱՄՆ-ի Մերակոյտը 2019 թուականին պաշտօնապէս ճանաչեց Հայոց ցեղասպանութիւնը: Սակայն ԱՄՆ-ի արտաքին քաղաքականութիւնը որոշողը Սպիտակ տունն է:

Պարբերականը չի շեղուցած է, որ ԱՄՆ-ի 44-րդ նախագահ՝ Պարք Օպաման ոսկեայ հնարաւորութիւն ունէր կատարելու նախընտրական խոստումը ու Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ճանաչելու պատմական փաստը: Այդուհանդերձ, Օպաման վերջին պահուն ետքայլ ըրաւ եւ փոխարէնը օգտագործեց Ցեղասպանութեան համար հայերէնով օգտագործուող «Մեծ եղեռն» եզրոյթը: Նոյնը ըրաւ նաեւ յաջորդ նախագահի՝ Տանըտ Թրամբի վարչակազմը:

Los Angeles Times-ը նշած է, որ նախագահի պաշտօնը ստանձնող Պայտրն, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականութիւնը խորապէս ու ամենալայն իմաստով ըմբռնող եղակի նորընտիր նախագահներէն է՝ ձորձ Հըրպըրթ Ուոքեր Պուշէն յետոյ: «Սակայն ան եւս ինքզինք զրսեւորած է որպէս չափաւոր գործնապաշտ: Անկասկած, արտաքին քաղաքականութիւնը կրնայ ըլլալ, որպէս բազմաչափ ճատրակի խաղ, որու գաղափարը ոչ թէ անպայմանօրէն յաղթելն է, այլ համոզուած ըլլալը, որ հակառակորդը կը պարտուի: Սակայն այստեղ կարեւոր է ճշմարտութիւնը եւ պատմութեան արդար ճանաչումը: Պայտրն պէտք է Հայոց ցեղասպանութիւնը կոչէ իր անունով», - ըսուած է Los Angeles Times-ի խմբագրականով:

դորդեց Գլխավոր դատախազի խոհրդական՝ Գոռ Աբրահամեան: Զերբակալուած Յուսէֆ ալ Ապէտ Հաճիին ու Մուհամադ Մուհամմատ Ալ Շիբերին մեղադրուած են միջազգային անհրաժեշտութեան, զինուած ընդհարումներու ժամանակ միջազգային մարդասիրական իրաւունքի նորմերու լուրջ խախ-

տումներու եւ վարձկանութեան յղուածներով: Անոնք հայ իրաւապահներուն պատմած են, որ Սուրիոյ մէջ հաւաքագրուելէն ետք, փոխադրուած են Ատրպէյճան՝ կոտելու Լեռնային Ղարաբաղի մէջ՝ ամսական 2 հազար տոլարի դիմաց: Նոյնիսկ ամէն հայու համար խոստացուած էին 100 տոլար գլխագին:

Քիմ Բարտաշեան Ընդգրկուած է Forbes-ի Միլիարատերերու Ցանկին Վրայ



Ամերիկեան հեռատեսիլային աստղ՝ Քիմ Բարտաշեան

Ամերիկեան հեռատեսիլային աստղ, գործարար՝ Քիմ Բարտաշեանի հարստութիւնը արդէն գերազանցած է 1 միլիարդ ԱՄՆ տոլարը, ան պաշտօնապէս ընդգրկուած է Forbes-ի միլիարատէրերու ցանկին մէջ:

Եթէ Հոկտեմբերին Քիմ Բարտաշեանի հարստութիւնը կը գնահատուէր շուրջ 780 միլիոն ԱՄՆ տոլարով, ապա KKW Beauty գեղեցկագիտական ապրանքանիշի եւ Skims ներքնագգետներու արտադրութեան, ինչպէս նաեւ իրապատում շոուի, շարք մը ներդրումներու ու գործարքներու շնորհիւ յաջողած է աւելցնել հարստութիւնը՝ հասցնել

1 միլիարդ ԱՄՆ տոլարի:

Ան նաեւ ունի երեք անշարժ գոյք՝ Քազապլանքայի մէջ, Disney-ի, Amazon-ի, Netflix-ի եւ Adidas բաժնետոմսեր, որոնք 2017 թուականին ստացած էր ամուսինէն՝ Քանյէ Ուեսթին, որպէս Սուրբ ծնունդի նուէր:

«Արմէնփրէս»-ի հարորդամբ, Forbes-ի միլիարատէրերու ցանկին վրայ, 40-ամեայ Քիմը այս պահուն կը գրաւէ 2755-րդ տեղը: Ցուցակը կը գլխաւորեն ձէֆ Պեգոսը (177 միլիարդ ԱՄՆ տոլար), իրոն Մասքը (151 միլիարդ ԱՄՆ տոլար) եւ Պեռնար Աւոնոն ու անոր ընտանիքը (150 միլիարդ ԱՄՆ տոլար):

Թուրքիան Պետք է Փոխէ

Շարունակուած էջ 1-էն

քաղաքականութիւնը», - ըսած է Փաշինեան:

Փաշինեան առաջնային համարած է ՀՀ գինուած ուժերու համալրումը ժամանակակից գէնքով:

«Հայաստանի Հանրապետութեան Զինուած ուժերը ժամանակակից ռազմատեխնիկական միջոցներով համալրելու գործընթացը եղել է լինելու է մեր առաջնահերթութիւններէ մէկը, եւ այդ հարցը մշտապէս լինելու է մեր ուշադրութեան կեդրոնում», - նշած է Փաշինեան:

Վարչապետի խօսքով՝ Հայաստանի Զինուած ուժերէն ներս արդէն մեկնարկած են լայնածաւալ բարեփոխութիւններ, որոնք նոյնպէս կ'իրագործուին ուս գործընկերներու հետ սերտ համագործակցութեամբ:

Հայաստանը մտադիր է Ռուսաստանի Դաշնութեան հետ զարգացնել ընդլայնուած եւ երկարաժամկէտ ռազմաճարտարապետական համագործակցութիւն, ինչ որ կը բխի երկու պետութիւններու երկարաժամկէտ ռազմավարական շահերէն, ըսած է վարչապետը:

Լրագրողի հարցին, թէ արդեօք Հայաստանը կը նախատեսէ շարունակել ռուսական գէնքի, մասնաւորապէս, ՍՈՒ-30Մ կործանիչներու եւ անոնց համար նախատեսուած սպառազինութեան գնումները, ՀՀ վարչապետը դրական պատասխան տուած է՝ նշելով, որ Հայաստանը խիստ շահագրգիռ է


Ռուսաստանի Դաշնութեան եւ ՀԱՊԿ-ի միւս դաշնակիցներու հետ ունենալ ժամանակակից եւ համատեղելի սպառազինութիւն եւ գինամթերք:

«Հաշուի առնելով, որ Հայաստանի Հանրապետութեան տարածքում միջպետական երկկողմ համաձայնագրերին համապատասխան ստեղծուել է գործում են հայ-ռուսական երկու իմբեր՝ Միացեալ զօրախումբը եւ Կովկասեան տարածաշրջանում հաւաքական անվտանգութեան հակաօդային պաշտպանութեան միացեալ տարածաշրջանային համակարգը, եւ, բացի այդ, երկու երկրներն էլ Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան անդամ պետութիւններ են, որի ձեւաչափով ստեղծուել են նաեւ զօրքեր եւ միաւորուած զօրամիւտորումներ, հասկանալի է, որ Հայաստանը խիստ շահագրգիռ է Ռուսաստանից մատակարարումների հարցում, որպէսզի ունենայ ժամանակակից եւ համատեղելի, առաջին հերթին, Ռուսաստանի Դաշնութեան եւ ՀԱՊԿ-ի միւս դաշնակիցների հետ, սպառազինութիւն եւ գինամթերք:

Ձեր նշած մոտելի ինքնաթիւները վերաբերեալ նոյնպէս դրական պատասխան կու տամ, քանի որ դրանք ժամանակակից բազմապաշտօն կործանիչներ են, եւ դրանց գնումը նախատեսուած է ինչպէս մեր երկկողմ պայմանագրային փաստաթղթերով, այնպէս էլ զինուած ուժերի զարգացման ազգային ծրագրով», - ըսած է Փաշինեան:

Համաշխարհային Դրամատունը 2021-ին Հայաստանի Մէջ Կը Նխատեսէ Տնտեսական Աճ

Համաշխարհային դրամատունը կանխատեսած է, որ Հայաստանի տնտեսական աճը 2021-ին կը հասնի 3.4 տոկոսի: «Արմէնփրէս»-ի հարորդամբ՝ այս մասին ըսուած է դրամատան Եւրոպա եւ Կեդրոնական Ասիոյ տարածաշրջանի տնտեսական զարգացումներու վարչապետի գեկոյցին մէջ:



«2020 թուականին, Հայաստանը տարածաշրջանէն ներս ունեցաւ Համախառն ներքին արդիւնքի (ՀՆԱ) կտրուկ կրճատումներէն մէկը՝ 7.6 տոկոս, COVID-19-ի բռնկումը եւ տարեկերջին Ատրպէյճանի հետ ռազմական բախումը ազդեցին արդիւնքներուն վրայ: Կ'ենթադրուի, որ 2020 թուականին աղքատութիւնը աճած ըլլայ 7 տոկոսային կէտով: Տնտեսութեան վերականգնումը կ'ըլլայ աստիճանական», - ըսուած է գեկոյցով:

Համաշխարհային դրամատունը իր գեկոյցին մէջ յիշեցուցած է, որ «Քորոնա» ժահրի համավարակէն առաջ Հայաստանը աստիճանաբար կը բարելաւէր իր գործարար միջավայրը: «Կը հաստատէր տնտեսական խելամիտ կառավարման մրցանիշ, որ կ'ամրապնդուէր ուժեղ հարկային տեսչական կանոնով, գնաճի համար նպատակաւորուած դրամավարկային քաղաքականութեան շրջանակով եւ ֆինանսական ոլորտի վերահսկողութիւնը բարելաւելով: Իշխանութիւնները սկսան բարեփոխութիւններու յաւակնոտ ծրագիր, որ նպատակաւորուած էր կառավարման ամրապնդման 2018-ին: Տնտեսական աճը ուժեղ էր՝ 2018 եւ 2019 թուականներուն միջինը կազմելով 6,4 տոկոս», - նշած են դրամատունէն:

Ձեկոյցին մէջ նաեւ ըսուած է, որ հակառակ Հայաստանի բարեփոխութիւններու առաջընթացին, կառուցուած քային մարտահրաւէրները թոյլ չեն տուած, որ երկիրը

հասնի իր ամբողջ ներուժին: Մարտահրաւէրներու շրջագիծէն ներս նշուած է կառավարման բացերու՝ դատաիրաւական թերի բարեփոխութիւններու եւ այլ հարցերու մասին՝ շեշտելով, որ աշխարհաքաղաքական լարուած իրավիճակը աւելի կը սրէ այդ մարտահրաւէրները:

Նշուած է, որ սակայն Հայաստանի առաջընթացը ձախողած է 2020-ին երկու ցնցումներու պատճառով՝ համավարակի եւ Արցախի պատերազմի: 2020-ի իրական ՀՆԱ-ն անկում ապրած է 7,6 տոկոսով:

«Կը նախատեսուի, որ ՀՆԱ-ի աճը մասամբ կը վերականգնուի 2021-ին՝ 3,4 տոկոս եւ աւելի ուժեղ 2022 թուականին՝ 4,3 տոկոս: Վերականգնումը դանդաղ կ'ըլլայ. մինչեւ 2023 թուականը տնտեսութիւնը դժուար թէ վերադառնայ մինչեւ COVID-ի եղած արտադրանքի մակարդակին», - ըսուած է գեկոյցով:

Նաեւ նշուած է, որ կ'ակնկալուի, որ մասնաւոր սպառումը եւ ծառայութիւններու ոլորտը աստիճանաբար կը վերականգնի: Մասնաւոր ներդրումները, ամենայն հաւանականութեամբ, կը մնան զսպուած՝ արտացոլելով ներդրողներու թոյլ վստահութիւնը: Հակամարտութեան յաջորդող մեծ ծախսերը եւ հանրային ներդրումներու յաւակնոտ ծրագիրները, հակառակ, որ մեղմուած են կատարման մարտահրաւէրներով, սակայն կը բարձրացնեն հարկապիւտեմական բացը եւ միջնաժամկէտ հեռանկարով պարտք-ՀՆԱ յարաբերակցութիւնը կը բարձրացնեն 70 տոկոսէն:

Կեանքէն Հեռացաւ Արկաղի Տէր Թադեւոսեան

Մարտ 31-ին, 81 տարեկան, Արցախի հերոս, զօրավար-մայր Արկաղի Տէր Թադեւոսեան (Քոմանտոս) մահացաւ: Այս մասին «Ազատութիւն»-ին յայտնեց «Էրեբունի» Բժշկական Կեդրոնի հասարակայնութեան հետ կապերու բաժնի ղեկավար՝ Շուշան Հունանեան, ան աւելցուց, որ Տէր Թադեւոսեան կը գտնուէր վերակենդանացման բաժանմունք՝ ծայրայեղ ծանր վիճակի մէջ:



Արկաղի Տէր Թադեւոսեան ծնած է 1939-ի Մայիս 22-ին, Խորհրդային Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսի մէջ: 1991-ին Տէր Թադեւոսեան նշանակուած է ՀՀ պաշտպանութեան կոմիտէի արտադրողական պատրաստութեան բաժնի պետ: 1991-ի Հոկտեմբեր 30-ին Արցախի նորաստեղծ ինքնապաշտպանական ուժերը Տէր Թադեւոսեանի հրամանատարութեամբ իրագործուած

ռազմագործողութեան շնորհիւ ազատագրած են Հադրութի շրջանի Տող գիւղը: 1992-ի Մայիսին, Քոմանտոսը աշխոյժ մասնակցութիւն ունեցած է Շուշի քաղաքի ազատագրման ռազմագործողութեան նախապատրաստման աշխատանքներուն:

Եռաբլուրի Մեջ Բարձրաստիճան Պաշտօնեաները Յարգանքի Տուրք Մատուցեցին Ապրիլեանի Նահատակներու Յիշատակին



Եռաբլուր գինուորական պանթեոնի մէջ, ՀՀ նախագահ՝ Արմէն Սարգսեան, ՀՀ Ազգային ժողովի նախագահ՝ Արարատ Միրզոյեան յարգանքի տուրք մատուցած են 2016-ի Ապրիլ 2-ին մեկնարկած քառօրեայ պատերազմին, ինչպէս նաեւ 2020-ի 44-օրեայ պատերազմի նահատակներու յիշատակին: Վարչապետ Նիկոլ Փաշինեանի անունով Եռաբլուրին մէջ ծաղիկներ դրուած են Ապրիլեան քառօրեայ պատերազմի հերոսներու շիրիմներուն եւ ծաղիկեպակ՝ զոհուած ազատամարտիկներու յիշատակը յաւերժացնող յուշահամալիրին:

ՀՀ պաշտպանութեան նախարար՝ Վաղարշակ Յարութիւնեանի եւ Հայաստանի Զինուած ուժերու գլխաւոր շտաբի պետ՝ Արտակ Դաւթեանի գլխաւորութեամբ Ապրիլ 2-ին Եռաբլուր պանթեոն այցելած են նաեւ բարձրագոյն սպայակազմը:

«Այսօր ողբում ենք ու հպարտանում ենք մեր քաջարի զինծառայողներով, ովքեր, կատարելով իրենց առջեւ դրուած խնդիրը, նահատակուեցին յանուն Հայրենիքի թէ 2016 թուականի քառօրեայ, թէ վերջին 44-օրեայ պատերազմի ընթացքում: Եթէ Ապրիլեան պատերազմից դասեր քաղած չլինէինք, ապա վերջին 44-օրեայ պատերազմն այլ ելք կ'ունենար: Մենք կարող էինք Արցախն ամբողջութեամբ կորցնել», - «Արմէնփրէս»-ի հաղորդմամբ, լրագրողներու հետ զրոյցի ընթացքին նշեց Արտակ Դաւթեան:

Յիշեցնենք, որ Ապրիլ 1-ին լոյս 2-ի գիշերը ատրպէյճանական կողմը, կոպտօրէն ոտնահարելով հրադադարի մասին 1994-ի Մայիս 12-ի եւ միջադէպերու կարգաւորման մասին 1995-ի Փետրուար 6-ի համաձայնագիրները, լայնամասշտապ յարձակում նախաձեռնեց Լեւոնալին Լարաբաղի Հանրապետութեան եւ Ատրպէյճանի զինուած ուժերու շփման գիծի ողջ երկայնքով՝ ծանր սարքաւորումներու, հրետանիի եւ ռազմական օդուժի կիրառմամբ:

Առձակատումը տեւեց Ապրիլ 2-էն 5-ը: Առաւել թէ՛ մարտեր ընթացած են արցախա-ատրպէյճանական շփման գիծի հարաւային (Հաղրութ) եւ հիւսիսարեւելեան (Մարտակերտ) ուղղութիւններուն: Ապրիլի ընթացքին հայկական զինուած ուժերէն մարտական գործողութիւններու հետեւանքով զոհուած է աւելի քան 100 զինծառայող:

Կը Սպասենք Պայտընի Խոստումին Իրականացման

Շարունակուած էջ 1-էն

բանալու՝ սահմանները: Ներկայիս, Միացեալ Նահանգներ-Թուրքիա յարաբերութիւնները կը բոլորեն իրենց վատագոյն ժամանակաշրջանը: Ամերիկա դժգոհ է, որ ՆԱԹՕ-ի իր դաշնակից երկիրը Ռուսական S-400 հրթիռային համակարգ կը տեղադրէ իր տարածքէն ներս, որուն ի պատասխան Թուրքիան դուրս ձգուեցաւ գեր-արդիական F-35 կործանիչներու մատակարարման ծրագիրէն: Նոր վարչակազմը նաեւ աւելի մեծ ուշադրութիւն կը դարձնէ Թուրքիոյ ներքին հարցերուն, երբ նախագահ Էրտողանի քաղաքական հակառակորդները կենթարկուին հալածանքներու ու երկարատեւ բանտարկութեան: Թուրքիոյ մէջ տակաւին կը յիշեն ճիշդ Պայտընի հարցազրոյցը «Նիւ Եորք Թայմզ» թերթին հետ, որու ընթացքին Ամերիկայի ապագայ նախագահը կը խօսէր Էրտողանի բռնատիրական իշխանութիւնը

հեռացնելու մասին: Այս բոլորի կողքին կայ նաեւ Պայտըն-Էրտողան անձնական յարաբերութիւններու բացակայութիւնը: Պաշտօնի գալէն աւելի քան երկու ամիս անց, Պայտըն տակաւին չէ պատասխանած Էրտողանի շնորհաւորական հեռաձայնին: Սպիտակ Տան խօսնակ ճիշդ Փաքի վերջերս պատասխանելով լրագրողներու հարցին ըսած էր թէ, «օրին մէկը» այդ հեռաձայնային խօսակցութիւնը պիտի կայանայ: Փաստ է որ, նոր նախագահի ընտրութենէն ետք Էրտողան կորսնցուցած է իր ազդեցութիւնը Սպիտակ Տան վրայ: Անոր ու Տանուտ Թրամփի միջեւ հեռաձայնային խօսակցութիւնները, ի զարմանս քաղաքական շրջանակներու, գրեթէ մնայուն բնոյթ կը կրէին, բովանդակութեան մասին տեղեկութիւն չէր հաղորդուեր եւ շատ յաճախ նախկին նախագահի տեղի կու տար Թուրքիոյ նախագահի պահանջներուն:

Հրապարակային Հանդիպում Լրագրող Թաթուլ Յակոբեանի Հետ



Շարունակուած էջ 1-էն

Սոյն միջոցառումի հանդիսավարն ու համակարգիչն է Հայ Ամերիկեան Խորհուրդի փոխ-ատենապետ՝ Իրաւաբան Գրիգոր Մոլոյեան: Ան ողջունելէ ետք ներկայ հասարակութիւնը խնդրեց մէկ վայրկեան լուռութեամբ յարգել Արցախի հերոսական պայքարին զոհուած հայ ազատամարտիկներու յիշատակը: Այնուհետեւ ամփոփ գիծերով ներկայացուց օրուան հիւր ծանօթ լրագրող, վերլուծաբան եւ հեղինակ՝ Թաթուլ Յակոբեանը:

Իր նախաբանին մէջ՝ Թաթուլ Յակոբեան իր շնորհակալութիւնները յայտնեց Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան սոյն պատեհ առիթին համար: Մասնաւորաբար շեշտեց որ ինք անկախ լրագրող մը ըլլալով չի պատկանիր որեւէ կուսակցութեան կամ ազդեցութիւններու: Այլ խօսքով՝ ինքնուրոյն անձնաւորութիւն մըն է: Արցախի պատերազմին անդրադառնալով Թ. Յակոբեան դրուատեց հայ զինուորի մարտունակութիւնն ու խիզախութիւնը, սակայն միւս կողմէ պատրաստ չէր դիմակալելու շատ աւելի լաւ պատրաստուած ատրպէյճանական հզօր բանակին...: «Մենք պարտուեցինք, որովհետեւ տասնեակ տարիներէ ի վեր երազանքների մէջ էինք, զանազան մասերով: Արեւմտեան Հայաստանի պարագային եւս երազանքների մէջ էինք... եւ աղէտի առաջ գտնուեցինք»:

Թաթուլ Յակոբեանի կարծիքով մենք շատ մը պատենութիւն-

ներ կորսնցուցինք միջ-պետական յարաբերութիւններուն մէջ: «Արցախի պատերազմին» մենք «դաւաճաններ» չունեցանք, այլ սխալ նախատեսութիւններ եւ հաշուարկումներ եղան, թշնամիի ուժեղ պատրաստութեան, յատկապէս նիւթա-թեքնիքական, զինուժի գերակայութեան եւ արտաքին օժանդակութեան տեսակէտէն, ... Չեմ գիտեր թէ համազգային այս ծանր վիճակից ինչպէս դուրս գանք...» ըսաւ Թաթուլ Յակոբեան:

Սոյն հանդիպման երկրորդ մասին մէջ տեղի ունեցաւ հարց-պատասխանի առիթ: Տրուած պատասխաններէն յայտնի եղաւ որ ինք լրիւ դէմ է Արցախի ինքնավարութեան «Ատրպէյճանի հովանաւորութեան ներքեւ»: Իր կարծիքով Հայաստան պէտք է ունենայ նոր մտայն գործը իշխանութիւն, ոչ թէ սոյն տնտեսութեան վերելքին եւ վերակազմակերպէ բանակը:

Երեկոյթի աւարտին խօսք առաւ Կլենտէյլ Քաղաքապետ Վրէժ Աղաճանեան: Ան դրուատանքով խօսեցաւ Արցախի եւ տեղուց հայութեան մասին: Իսկ պատերազմի ժխտական արդիւնքին անդրադառնալով ցաւով արտայայտուեցաւ արդիւնքին մասին եւ յարեց. «...Մենք քնացած մնացինք եւ մեր ոյժերը չի կրցանք գնահատել»:

Աւարտին՝ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ ընկերային ժամ, որուն ընթացքին կատարուեցաւ Թաթուլ Յակոբեանի «Մահուան Հովիտ»-ի եւ միւս գիրքերու վաճառքը՝ հեղինակի մակագրութեամբ:

2019-ին, Գոնկրէսի երկու պալատները՝ Ներկայացուցիչներու Տունը եւ ապա Ծերակոյտը գրեթէ միաձայնութեամբ ընդունեցին Հայկական Ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւեր: Նախագահ Թրամփ մերժեց հետեւիլ այդ օրինակին ու 2020-ի իր պատգամին մէջ բաւարարուեցաւ օգ-

տագործելով «մեծ եղեռն» եզրը: Այժմ հերթը եկած է ճիշդ Պայտընին, որ կը նկատուի սկզբունքային անձնաւորութիւն ու մենք կը սպասենք որ ան կ'իրականացնէ իր խոստումը ու Հայկական Ցեղասպանութիւնը կը կոչէ իր իսկական անունով:

«ՄԱՍԻՍ»

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈԳԻ ԸՆՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸՆՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Սփիւռքի Հասարակական Կարծիքի Ծաւալուն Յետազոտութիւն

Ապրիլի 12-ին Չորս Երկրում Վերսկսւում Է Հայկական Սփիւռքի Հարցախոյզը



Հայկական սփիւռքի հարցախոյզը այս պարտնաբեր կ'իրականացուի Մեծ Բրիտանիայի (յատկապէս Լոնտոն, Մանչեսթեր, Բիրմինգհեմ), Փարիզի եւ նրա շրջակայքի, Բելգիայի (յատկապէս Բրիւսելի եւ Անտվերպենի) եւ Դոնի Ռոստովի (Ռուսաստան) հայկական համայնքներում:

Հայկական սփիւռքի հարցախոյզը (ՀՄՀ) Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան նախաձեռնութիւնն է, որը գործում է Լոնտոնի հայկական ինստիտուտի հովանու ներքոյ, մի խումբ գիտնականների եւ հետազոտողների առաջնորդութեամբ:

Հետազոտութիւնը արժէքաւոր պատկերացում է տալիս սփիւռքի հասարակական կարծիքի եւ բազմաթիւ հարցերի շուրջ մարդկանց մտքերի վերաբերեալ: Այն փաստահան գիտելիք է տրամադրում հանրութեանը եւ օգտակար տուեալներ՝ համայնքների առաջնորդներին, ակտիւիստներին եւ քաղաքականութիւն մշակողներին՝ ի թիւս այլոց, ինչը թոյլ է տալիս աւելի լաւ հասկանալ ու վերլուծել համայնքները՝ ծրագրերի ու նախագծերի մշակման համար:

Ինչպէս բացատրում է Օքսֆորդի համալսարանի դասախօս եւ ՀՄՀ տնօրէն դոկտոր Հրաչ Զիլինգիրեանը. «Հետազոտութեան ընթացքում հարցուողներին փորձում ենք իմանալ նրանց մտքերն ու տեսակէտները ինքնութեան, ինչպէս նաեւ պատկանելութեան հետ կապուած այլ խնդիրների վերաբերեալ՝ որպէս հայեր եւ որպէս տարբեր երկրների քաղաքացիներ: Այլ թեմաների թւում են լեզուն եւ մշակոյթը, եկեղեցին եւ կրօնը, համայնքային ներգրաւուածութիւնը, Հայաստանի հետ յարաբերութիւնները, համավարակն ու Արցախեան պատերազմը»: Վերջին երկու թեմաներն այս տարի են աւելացուել հարցաթերթիկում:

«Համայնքների բոլոր անդամներին խրախուսում ենք մասնակցել հետազոտութեան այս շրջափուլի հարցմանը», - ասաց Զիլինգիրեանը: Բելգիայում, Բրիտանիայում, Փարիզում եւ Դոնի Ռոստովում բնակուող ցանկացած հայ, որի 16 տարեկանը լրացել է, կարող է Ապրիլի 12-ից առցանց լրացնել հարցաթերթիկը՝ այցելելով www.armeniandiasporasurvey.com: Նրանց համար, ովքեր ցանկանում են այն լրացնել առձեռն, հասանելի կը լինեն տպագիր հարցաթերթիկներ:

ՀՄՀ-ը մեկնարկել է 2018-ին՝ նախնական հետազոտութիւն կատարելով չորս համայնքում՝ Պոստոն, Գահիրէ, Մարսել եւ Փասատենա: Յաջողութեան հասնելով՝ 2019 թուականին այն հետազոտել է եւս չորս համայնք՝ Արժենտինա, Լիբանան, Գանատա (Մոնրէալ) եւ Ռուսիան:

Ներկայ հարցախոյզում ներառուած համայնքները պէտք է ուսումնասիրուէին 2020 թ., սակայն դաշտային աշխատանքները յետաձգուեցին համաճարակի եւ Արցախեան երկրորդ պատերազմի պատճառով: Այս տարուայ աշնանը նախատեսուած է հարցում անել Հիւսիսային Ամերիկայի համայնքներում: Սրանով կ'եզրափակուի նախագծի եռամեայ ցիկլը:

«Ուրախ ենք, որ բազում երկրների սփիւռքի մասին այս պատեմատիկ հետազոտութիւնը հունի մէջ է այժմ», - ասում է Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Հայ համայնքների բաժնի տնօրէն դոկտոր Ռազմիկ Փանոսեանը: «Այս հետազոտական նախագիծը շատ շօշափելի արդիւնքներ է տալիս քաղաքականութիւնների մշակման համար, յատկապէս՝ ի տես այն հսկայական մարտահրաւերների, որ ծառայել են Հայաստանի եւ հայերի առաջ», - աւելացնում է նա:

2018 եւ 2019 թուականների ուսումնասիրութիւնների արդիւնքները հրատարակուել են առանձին առանձին: 2019-ի ուսումնասիրութիւնը հասանելի է անգլերէն, հայերէն եւ սպաներէն: Բոլոր զեկոյցները կարելի է անվճար ներբեռնել ՀՄՀ կայքէջից՝ www.armeniandiasporasurvey.com:

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքը Լիբանանի Մէջ Կը Սեկնարկէ «Նորարար Մշակոյթի Ծրագիր»-ը



Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքի «Նորարար Մշակոյթի Ծրագիր»-ը ուղղուած է լիբանանահայ ա'յն երիտասարդներուն, որոնք կը փափաքին արեւմտահայերէնով ստեղծագործել: Ծրագրին հիմնական նպատակն է խթանել արեւմտահայերէնով յղացուած նորաշունչ նախաձեռնութիւններու կիրառութիւնը:

Հիմնարկութիւնը «Նորարար Մշակոյթի Ծրագիր»-ը մեկնարկեց Փետրուար 2020-ին. ան Լիբանանին վերաբերող ռազմավարութեան հինգ հիմնասիւններէն մէկն է:

Ծրագրին առաջին տարուան ընթացքին Հիմնարկութիւնը Լիբանան ապրող 18-35 տարեկան երիտասարդներէ ստացաւ 27 դիմում, որոնցմէ ընտրուեցաւ տասը ծրագիր: Այժմ, իւրաքանչիւր ծրագրի պատասխանատու անձ կամ խմբակ կ'աշխատի կեանքի կոչել իրենց ժամանակին եւ բազմաբնոյթ իրականութեան առնչուող ստեղծագործ եւ նորարար ծրագիրները, որպէս արտայայտչամիջոց ունենալով արեւմտահայերէնը:

Լիբանանի «Նորարար Մշակոյթի Ծրագիր»-ին 2020-2021 թուականի նպատառուներն են՝
* ԴԻՏԷ՛ - Հրաչր Գալեմքերեան եւ Հերմինէ Նիւրբեթլեան Հարթակ մը, ուր տարբեր տեսակի արուեստներու (լսողական, տեսողական, գրական...) աշխատանոցներու ընդմէջէն հնարաւոր պիտի ըլլայ անդրադառնալ երիտասարդութիւնը յուզող բազմազան նիւթերու:

* ԿԱՐՄԻՐ ՄՈՄ - Կարէն Տարագճեան եւ Սուրէն Խոլըշեան Առցանց թատերական ներկայացում մը՝ Պուրճ Համուտի ոսկերիչներու անհետացող արհեստին եւ անոնց առօրեային մասին:

* ԿՌՈՒՆԿ շարժապատկեր-Գրիգոր Աւեսեան եւ Սերժ Մանուկեան

Երկու երկհարթ շարժապատկերներ (animation), հիմնուած Հրակ Փափագեանի «Բռնկում» եւ «Շրջիկները» կարճ պատմութեան վրայ:

* ՂԱՐՊԻՅՅԷ - Գուրգէն Փափագեան

Վաւերագրական կարճ ֆիլմերու շարք՝ որ կը յայտնաբերէ շրջանի հայութեան կեանքը բնորոշող յատկանշական հիմնական երեւոյթները:

* ՄԷԿ - Ասատուր Պասմաճեան, Նարէ Քիւսպէքեան, Սէրուժ Յովսէփեան, Կարինէ Գիւլխանճեան

Երիտասարդները հետաքրքրող, արեւմտահայերէնով հազուադիւր խօսուող նիւթեր մատուցող հարթակ մը, որ նաեւ կ'անդրադառնայ հայերէնի տարբեր բարբառներուն:

* ՆՇՄԱՐ - Սարին Սանտրա Պաճաքեան
Լուսանկարչական պատում մը, որ կը նշմարէ հայու պատառիկներ եւ կը ներկայացնէ մեր շուրջ ապրող այնպէս հերոսները:

* ՊԱՏՄԱԿԱՆ - Կիրօ Գարաւարդանեան եւ Սերժ Մանուկեան
Հայոց պատմութեան մասին եօթը շարժապատկերներու (animation) շարք մը, որ լայն բնաբաններու ընդմէջէն պիտի քննարկէ հայոց պատմութեան մէջ որոշիչ դեր խաղացած տարբեր նիւթեր:

* ՊՏՈՅՏ ՄԸ ԼԻԲԱՆԱՆԱՅՆ ԹԵՐԹԵՐՈՒ ՀԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐՈՒՄ ՄԷՋ - Արմէն Պազգալեան
Անդրադարձ Լիբանանահայ հին թերթերու ծանուցումներու մշակոյթին, որ կը միտի վերակենդանացնել հոն եղած հարուստ եւ գունաւոր լեզուն:

* ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ - Յարութ Կիւլիւզեան
Լիբանանահայ վեց գրողներ՝ Անդրանիկ Ծառուկեան, Աբրահամ Ալիքեան, Պօղոս Մնայեան, Պէպօ Սիմոնեան, Սարգիս Կիրակոսեան եւ Յակոբ Մանուկեանի մասին վաւերագրական տեսերիւներ:

* ՎԱԶՐԻԿ - Շողակ Յովհաննէսեան
Գիտաառեղծուածային նկարչական վէպ, որուն դէպքերը տեղի կ'ունենան Վազրիկի կեանքին ակնթարթներէն մէկուն ընթացքին, ապագայապաշտ Պուրճ Համուտի մը մէջ:

Ծրագիրներուն մասին չաւելեալ տեղեկութիւն եւ մանրամասնութիւններ ունենալու համար կարելի է հետեւիլ Ֆէյսպուքի եւ Ինսթակրամի «Նորարար Մշակոյթի Ծրագիր» էջերուն՝

<https://www.facebook.com/creativeculture.20>
<https://www.instagram.com/creativeculture.20/>

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքի ծրագիրներուն մասին կարգալ՝ <https://gulbenkian.pt/armenian-communities/>

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

www.massisweekly.com
Updated Every Friday

Հայաստան Արցախ Ֆոնդը \$5.6 Միլիոնի Օժանդակություն Հայթայթած և Հայաստանին ու Արցախին

Յոնուարին Մարտ 2021-ի ընթացքին, Հայաստան Արցախ Ֆոնդը \$5.6 միլիոն արժողութեամբ մարդասիրական օժանդակություն հայթայթած է Հայաստանին ու Արցախին: Սոյն օժանդակությունը իրականացնելու համար, Հայաստան Արցախ Ֆոնդը \$5.5 միլիոն ընդհանուր արժէքով դեղորայք եւ այլ պիտոյքներ ապահոված է AmeriCares կազմակերպությունէն (\$2.9 միլիոն) եւ Direct Relief կազմակերպությունէն (\$2.6 միլիոն):

Այս ժամանակաշրջանին մեծարժէք ապրանքներ նուիրած են նաեւ Ամերիկահայ Բժշկական Միութիւնը (\$50,000) եւ Providence Heart Medical Center հիւանդանոցը (\$1,000):

Միւրեւի բարեպաշտ հայր-դիք, ինչպիսի՞ խորհուրդ կը հաղորդէ Քրիստոսի Յարութիւնը այսօր մեր կեանքին մէջ, ըլլալ անձնական եւ թէ հաւաքական: Ամենապարզ բառերով եթէ ուզենք բացատրել, ապա առաջին հերթին Քրիստոսի Յարութիւնը քրիստոնեայ հաւատացեալին համար հրաւերն է աղօթքի կեանքին, քանզի աղօթքով առաջնորդուած կեանքը իր ուղին կը բռնէ դէպի Աստուծոյ: Յարութեան հրաւերը աղօթքի կեանքով ապրելու նախապայմանն է քրիստոնեային համար, քանզի մեր հոգեւոր կեանքի շէնքը կը կառուցուի այդ հիմքին վրայ: Քրիստոսի Յարութեան խորհուրդէն մեզի հասնող երկրորդ պատգամը կը պարտաւորեցնէ բոլորս, որ մեզի տրուած կեանքին նայինք պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ, այն մշտապէս նորոգելու համար առաքինի կեանքի խոստումներով եւ ի մասնաւորի կեանքը արժեւորելու՝ ծառայութեան ճշմարիտ ոգով: Մենք այստեղ կ'ուզենք յատուկ շեշտադրութեամբ ընդգծել մեր այս մտածումը, որովհետեւ կեանքին մէջ առկայ բոլոր կոչումները պարտ են ընդունել որպէս նուէր Աստուծոյ կողմէ մեզի վստահուած:

Ծնողներ, ուսուցիչներ, գիտնականներ, հոգեւորականներ ու պաշտօնատարներ, մէկ խօսքով ամէն ոք իր պաշտօնին մէջ պարտ է մշտապէս ինքզինք նորոգելու առաքինութեան խոստումներով ու ծառայութեան ոգով: Եւ եթէ աշխարհի կեանքին մէջ այսօր կը տեսնենք թերիներ, ապա այդ արդիւնքն է անտարբերութեան: Աստուծոյ ձեռքով մեզի վստահուած տիեզերքը եւ ստեղծագործութեան մէջ մարդը՝ որպէս բարին, մշտապէս պէտք ունին վերահսկողութեան ու նորոգութեան:

Քրիստոսի հրաշալի Յարութիւնը մեր հոգեւոր էութեանը մէջ կը ներառէ նաեւ մէկ այլ շափազանց կարեւոր կոչում մը, որ այն հաւատքը, որուն ժառանգութեանը



արժանի ենք դարձած, նոյնին ժառանգակից դարձնենք նաեւ մեր գաւակունք եւ գալիք սերունդները: Եւ ինչպէ՞ս բացատրենք ժառանգին իմաստը. հայ քրիստոնեայի համար ժառանգը՝ Աստուծոյ սէրն ու գիտակցութիւնն է, քրիստոնէական հաւատքն է ու նուիրումը եկեղեցւոյ առաքելութեան, հայրենական տեսիլքն է եւ հայ քրիստոնեայի ընտանիքի խորհուրդը: Այս ժառանգը Յարութեան խորհուրդին տեսանելի ու շօշափելի արտայայտութիւնն է, որուն շնորհիւ մեր մէջ կ'ամրագրենք իւրովի ինքնութիւն: Մարդը իր մէջ պիտի կրէ ինքնութիւն, որը իր հաւատքի կեանքին դրոշմն է, իր պատմութեան զգացողութիւնն ու գիտակցութիւնն է, իր մշակոյթի հանդէպ յարգանքն է: Այս տեսիլքով ապրող մարդը միայն կարողութիւնը կ'ունենայ արժէքներ գնահատելու եւ իր դիմացինին հոգեւոր ու ազգային ինքնութեան առջեւ խոնարհելու:

Քրիստոս յարեալ ի մեռելոց, Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:

Միւրեւի՝ բարեպաշտ հայր-դիք, քանանք մեր հոգիին դռները, որպէսզի այստեղ մշտապէս արձանագրէ Յարութեան խորհուրդը: Զատկական այս տօնական օրին մեր հոգիները զարդարենք Յարութեան խորհուրդով, որպէսզի դէպի կեանք վերադառնանք առաւել զօրացած մեր քրիստոնէական հաւատքով ու կոչումով: Բառեր չփնտրենք փորձել բացատրելու համար խորհուրդը Յարութեան, քանզի մարդկային տրամաբանութեան մէջ կարելի չէ սահմանափակել Ս. Յարութեան խորհուրդին անսահմանելիութիւնը: Զուարթ հոգիներով յայտարարենք Ս. Յարութեան խորհուրդին բարի լուրը եւ այն ժամանակ պիտի զգանք նոր կեանքին շարժումը մեր ողջ էութեանը մէջ: Ահա այդ նոր ոգիի ճարտարապետն է Քրիստոս իր Յարութեամբ, որուն հաղորդակցութեամբ երկնային լոյսով կը զարդարուի նաեւ մեր ողջ էութիւնը:

Քրիստոս յարեալ ի մեռելոց, Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:

ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ

Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Տ. Դանիէլ Եպսկ. Ֆընտըքեանի Պատգամը

Նեղութիւն եւ Յաղթահարում

Մեր Տիրոջ երկրային առաքելութեան վերջին գիշերն էր վերջին գիշերը՝ ազատօրէն եւ անկաշկանդ արտայայտուելու իր սիրած անձերուն մօտ: Եւ Քրիստոս նախընտրեց, որ այդ մի քանի թանկագին ժամերը իր ընկերներով շրջապատուած ըլլայ, ընթրիքի սեղանին շուրջ հաց կիսելով եւ իր Հօրը աղօթելով անցնէ:

Այդ գիշեր Յիսուս իր աշակերտներուն քնքօրէն խօսեցաւ: Բայց հակառակ անոր որ տխրութիւնը պատած էր իր հոգին, կարծէք աճապարանքի մէջ էր իր սիրած աշակերտներուն ներարկելու այն Հոգին որ պէտք պիտի ունենային կարենալ շարունակելու իր առաքելութիւնը - «Փոքրիկներս»- ըսելով դիմեց անոնց, «ես ձեզի հետ պիտի ըլլամ շատ քիչ ժամանակով»: Յետոյ Ան բացատրեց որ կորսուած փոքրիկներու պէս անոնք որ Զինք կը փնտռեն շուտով պիտի գտնեն, «բայց ուր որ ես կ'երթամ դուք չէք կրնար գալ»: Յամենայնդէպս Ան պատուիրեց՝ «Միրեցէք միմիանց: Ինչպէս որ ես սիրեցի ձեզ»: (Յովհ. 13.33-34)

Քրիստոսի համար խաչելութեան ուրուականը կեցած էր իր առաջ: Բայց Ան շարունակեց իր հետեւորդներուն համոզել որ ցաւի ու տառապանքի աղբիւր եղող Աշխարհը չի կրնար վերջին խօսքը ունենալ:

«Այս բաները որ ես խօսեցայ ձեզի հետ, որպէսզի իմ միջոցաւ խաղաղութիւն ունենաք: Այս աշխարհին մէջ դուք նեղութիւն պիտի ունենաք» - Յիսուս զգուշացուց գիրենք - «Բայց ուրախ եղէք. ես յաղթեցի աշխարհին» (Յովհ. 16:33):

Տուեալ պահուն շատ դժուար էր հաւատալ Անոր հաւաստիացումին: Բայց ճիշտ էր ըսածը. Զատկուան Կիրակի օրը Քրիստոս Յարութիւն առաւ մեռելներէն - ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԼ Ի ՄԵՐԵԼՈՅ: Եւ իր յարութեամբ Ան յաղթահարեց մեղքի ու մահուան մէջ պատանդ պահուած աշխարհը:

Գրեթէ երկու հազար տարի անց, ինչ որ Յիսուս ըսած եւ ըրած էր իր վերջին ընթրիքի ժամանակ, կեանք պարգեւող Սուրբ Պատարագի միջոցով կը մնայ մեզի հետ: Մենք իր աշակերտներն ենք եւ արտօնութիւնը ունինք սուրբ սեղանի շուրջ միանալու մեր Տիրոջը եւ լսելու իր խօսքը:

Քրիստոս իր երեխաներուն հետ սրտին խորքէն խօսած է շատ ձեւերով: Որպէս հայ քրիստոնեաներ, կ'անդրադառնանք թէ մեր պատմութեան իւրաքանչիւր վճռական անկիւնադարձ պատասխան է մեզի ճիշտ այն ձեւով, որ Յիսուս Քրիստոս խորհրդաւոր կերպով մեզի համար յայտնուած է: Բնական է, Ան կը շարունակէ խօսիլ մեր հետ նոյնիսկ մեր առանձնութեան մէջ, բաժանումի, ցաւի ու կորուստի պահերուն ըլլան անոնք ֆիզիքական թէ հոգեկան ցաւերուն ընդմէջէն:

Այս օրերուն մեզմէ շատեր բաժնուած են ընկերներէն, ընտանիքէն, եկեղեցւոյ առօրեայ կեանքէն՝ մեր երեւակայածէն ալ աւելի ժամանակով: Հարազատներու եւ հայրենակիցներու կորուստը մեզ



սուգի մատնած է: Անհաշիւ են կորուստները ամբողջ աշխարհը վարակող հիւանդութենէն, սակայն հայերու համար յաւելեալ կորուստներ եղան Պէյրութի աղիտալի պայթիւնին պատճառով: Իսկ ամէնէն ցաւալին՝ քառասունչորսօրեայ պատերազմին հետեւանքով մեր նախնիներուն հայրենիք Հայաստան-Արցախին վիճակուած կորուստն է, մեր պատմական աշխարհին կրած կորուստներն են՝ ըլլան անոնք անհամար երիտասարդ զօհեր թէ թանկագին պատմական սրբավայրերու կորուստ:

Այս բոլոր իրողութիւններուն դէմ հանդիման մեր Տիրոջ խօսքերուն արձագանգն է որ կը լսենք - «Աշխարհի մէջ նեղութիւն պիտի կրէք»: Մենք կը լսենք որ Քրիստոս Ի'նքը անձանթ մը չէր մեր ներկայի ցաւին, վիշտին, տանջանքին, աքսորի եւ առանձնութեան զգացումներուն համար:

Բայց ասիկա մեր ամենամեծ մօտեցումն ու շփման կէտն է Տիրոջ հետ: Իրօք, մենք երբէք աւելի մօտ չենք եղած Աստուծոյ, եւ Ան երբէք մեզի աւելի մօտ չէ, քան երբ մենք կախուած ենք իմացին, իր միածին Որդւոյն՝ Յիսուս Քրիստոսի հետ: Ասիկա է քրիստոնէական հաւատքի խորքը եւ գերագոյն եզակի իմաստը, որ հաստատուեցաւ Ս. Պողոսի կողմէ, երբ ան գրեց. «Ես խաչակից եմ ընդ Քրիստոսի, եւ այլեւս ես չէ որ կ'ապրիմ այլ Քրիստոսն է որ կ'ապրիմ մէջս: Կեանքը որ հիմա կ'ապրիմ մայր մարմնին մէջ, կ'ապրիմ Աստուծոյ որդոյն հաւատքով, որ սիրեց զիս եւ կեանքը տուաւ ինձի համար: (Գաղ. 2.20):

Մենք մեզ պէտք չէ խաբենք, որ Առաքեալը այստեղ պարզապէս այլաբանական խօսքով կը դիմէր: «Խաչակից ընդ Քրիստոսի» ըլլալով կ'ընդունի Յիսուսին որպէս Տէր հետեւիլ մինչեւ Գողգոթա: Ինչպէս դարբերու ընթացքին նահատակները հասկցան որ Քրիստոս ուղղակիօրէն մեզի հետ կը խօսէր երբ կ'ըսէր թէ «Աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք»: Այս է տխուր, աննկուն անփոփոխ ճշմարտութիւնը, որ մեր Տէրը բացառապէս մեզ է անոնց համար որոնց կը սիրէ:

Բայց, Քրիստոս իր իսկ անհաւոր չարչարանքին նախորդող գիշերը իր սիրելիներուն մէկ այլ

Լենինգրադցիների ճաշարանը Եւ Մայրիկս (Պատմուածք՝ իրական փաստերով)

ՅԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

- Մայրիկս ինչն ազդարարեց խորհրդային երկրի յաղթանակը Գերմանիայի դէմ: Պատերազմի դաշտից վերադարձան մեր թաղի ողջ մնացած փոքրաթիւ գինուորները, ոմանք՝ հաշմանդամ դարձած: Դեռ հայրիկիցս լուր չկար: Հազիւ ութ տարեկան, ես գգում էի մօրս անհանգիստ վիճակը, տեսնում էի խուսափողական հայեացքն ու միայնութեան մէջ մնալու ձգտումը: Յաճախ էլ նրան «բռնացնում» էի Յիսուսի պատկերի առջեւ աղօթելու: Դիւրին է ասելը, նա գրեթէ չորս տարի ոչ մի լուր չունէր ամուսնուց:

Առերեւոյթ կեանքը մտաւ բնական հունի մէջ, բայց առաջուկ նման, երկրում տիրում էր սովն ու աղքատութիւնը: Բնականաբար երկիրը պէտք ունէր նոր շնչառութեան: Երկրի նիւթական-տնտեսական անձուկ վիճակը հազարաւոր գոհերի պատճառ դարձաւ ողջ խորհրդային երկրում, եւ այն էլ՝ այսպէս կոչուած խաղաղ պայմաններում:

Գերտերութիւնները, որ մինչ այդ, պատերազմի ընթացքին տնտեսապէս օգնութիւն էին ցոյց տալիս խորհրդային երկրին, այժմ արդէն «ձեռք էին քաշել» իրենց համար զգուշի կոմունիստական վարչակարգին օգնելուց: Նրանց նպատակն էր վերջնականապէս տնտեսական քայքայումի ենթարկել կոմունիստական վարչակարգը: Ամէհի սովն ու համաճարակը սկսուեց պատերազմից յետոյ: Մարդիկ ամէն մի միջոցի դիմում էին օրուայ նուազագոյն ուտելիքը հայթայթելու համար: Այլանթախը սովորական երեւոյթի վերածուեց:

Հոկտեմբեր ամսուայ վերջին օրերն էին: Տարհանուած (Evacuation) լենինգրադցիների համար ստեղծուած կառավարական ճաշարանում էր աշխատում մայրիկս: Ճաշարանը փակուելու վրայ էր, սակայն մենք եւ մեր հարեանները դեռ գաղտնօրէն օգտուում էինք այդ ճաշարանից:

Ամէնուր սով էր: Այստեղից-այնտեղից կարելի էր լսել.

- Էն մեր դիմացի փողոցում ապրող Արմոն սովից ուռել է եւ մահացել:

- Իսկ էն Սահակին էլ հազիւ են փրկել, - ասում էր միւսը:

Ո՛ւմ, որի՞ն հասնէր խեղճ մայրիկս: Նախկինում Արաբկիրի ֆրանսահայերի բարակներում ապրող շատ ընտանիքներ էին եկել մեր թաղը ու կառավարական վարկի օգնութեամբ սեփական տներ կառուցել: Բոլորն էլ ակնկալիք ունէին աւագ խոհարար իմ մայրիկից:

Տարհանուած լենինգրադցիների թիւը գնալով նուազում էր, ըստ այնմ էլ պակասում էր ճաշարանին յատկացուող սննդամթերքի քանակը: Որքան սրուում, ողբերգական տեսք էր ստանում իրավիճակը, այնքան աւելանում էին ճաշարանի աշխատանքին հետեւող աչքերը: Բոլորն էլ անօթի էին, նոյնիսկ ոստիկանապետն ու Շրջսովետի նախագահը, որոնք մշտապէս ճաշում էին խոհանոցին կից մի փոքրիկ սենեակում:

Չափազանց դժուարացել էր ճաշարանից կերակուր «գողանալը»: Մեր դրացիները անյոյս վիճակում էին: Բարսեղն իր երեք գաւակներով, Չանգու գետի ձո-

րում, վայրի, սակայն անվնաս կանաչիներ էին հաւաքում եւ, հենց տեղում, հում վիճակում, առանց լուսնալու ճաշակելու համար:

- Բարսեղը քաղցածութիւնից էնքան խոտ ա կերել, որ ուռել ա, եւ հենա, հենա մահանալու է, - այս չարաբաստիկ լուրը տարածուեց թաղով մէկ:

Վրայ հասած շտապօգնութեան բժիշկը առաջին օգնութիւնը ցոյց տալուց յետոյ եզրակացրել էր.

- Առաջիկայ մէկ-երկու ժամուայ ընթացքում եթէ հիւանդը ապուրներ չ'օգտագործի, հազիւ թէ հնարաւոր լինի նրան փրկել:

Բարսեղի աւագ որդին, եղբորս՝ Արսենի մտերիմ ընկեր Յովնանը անմիջապէս վագում է ճաշարան՝ մայրիկիս մօտ ու նրան յայտնում բժշկի տուած ցուցմունքը:

- Լաւ, տղաս, ես հիմա մի բան կը կարգադրեմ: Դու սպասիր դրսում, երբ կերակուրը պատրաստ լինի՝ ես քեզ լուր կը տամ, - ասում է մայրս:

Առանց աջ ու ձախ նայելու, առանց ուշադրութիւն դարձնելու այն հանգամանքին, որ կարող են իրեն հետեւել, ձեռքի տակ եղած սննդամթերքով մի հիւանալի ապուր է պատրաստում եւ տալիս դրսում, պատի տակ կուչ եկած Յովնանին: Վերջինս էլ հիւանալի, բուրումնաւէտ ապուրը հասցնում է հօրը:

Այս գործողութիւնը երեք օր է տեւում, ու բնականաբար, լուրը դառնում է հասանելի ոչ միայն թաղի բնակիչներին, այլեւ պատկան մարմիններին:

- Սա խայտառակութիւն է, - կուսակցական ժողովում ամպագողգող ձայնով կարծես երկինքն է պայթեցնում Շրջսովետի կուսակցութեան քարտուղարը, - ի՞նչպէս կարելի է ինչ որ մի հիւանդի համար մի քանի օր կերակուր պատրաստել լենինգրադցիների սննդամթերքից: Ո՞վ է այդ կնոջը իրաւունք տուել նման բան անել:

- Լա՛ւ, լա՛ւ, ձեռք մի բարձրացրու ընկեր խուրձուղեան, - միջամտում է Շրջսովետի նախագահ Շահսուվարեանը, - ես հիմնականում գիտեմ թէ ինչ է եղել, այնուհանդերձ եկէք լսենք իրեն՝ վերժինէին: Այստեղ հաւաքուած է Արաբկիրի շրջանի կուսակցական ակտիւր եւ թող նա էլ որոշի, թէ ինչպէս պէտք է վարուել այդ կնոջ հետ:

- Ընկեր Ումբրիկեան (սա էլ KGB-ի գործակալներից է), - ապա մի ներս կանչէք այդ կնոջը, - կարգադրում է նախագահը:

Խեղճ մայրիկս մի բուռ դառած, մի տեսակ սմբած, մանր քայլերով մտնում է սրահից ներս: Բնաւ չես ասի, որ նա այն կենսախիւն 35-ամեայ աւելի քան համակրելի երիտասարդ կինն է:

- Վերգինէ (յաճախ էին այդպէս դիմում մայրիկիս), ասա, խօսի՛ր, թէ ինչպիսի՞ն է իրական պատմութիւնը, ամբողջ Արաբկիրը քո մասին է խօսում, շատերն էլ քեզ Պահապահ Հրեշտակի տեղ են դրել:

- Ի՞նչ ասեմ, ի՞նչ պատմեմ պարոն, - օ՛հ, կը ներէք, ընկեր Շահսու-Շահսու, - (վարեան, - կողքից յուշում է ամբողջ կուրծքը շքանշաններով «գարդարուած», գինուորական հագուկապով գնդապետը) վարեան, մեր դրացին՝ Բարսեղը շատ քանակի խոտ է կերել, կարծես սինձ են ասում, եւ



ամբողջ մարմինը ուռել է, կարելի է ասել՝ մի տեսակ թունաւորում:

- Լա՛ւ, յետոյ, յետո՞յ ինչ է եղել, - մէջ է ընկնում գինուորականը:

- Յետոյ այն, որ բժիշկն ասել էր, որ նա կարող է փրկուել, եթէ մի քանի օր ապուր, ինչպէս դուք էք ասում՝ սուպ ուտի եւ ջուր բնաւ չ'օգտագործի: Դէ՛, ես էլ մեր ճաշարանում տարբեր սուպեր պատրաստեցի եւ մարդը մի քանի օր դրանք ուտելուց յետոյ ոտքի ելաւ:

- Իսկ քեզ ո՞վ է իրաւունք տուել պետական միջոցները օգտագործել անհատական նպատակների համար, - սա էլ խուրձուղեանն էր, - մեր ուս եղբայրների եւ քոյրերի հասանելիք սննդի բաժնից մաս չատկացնել ինչ որ անյայտ մարդկանց:

- Ներողութիւն պարոն...

- Ես պարոն չեմ, չափդ ճանաչիր ընկերուհի... «Պարոնը» այնտեղ էր, քո կապիտալիստական երկրում:

- Ես ալ «ընկերուհի» չեմ պարոն, ես տիկին եմ..., արեւմտահայերէնի անցնելով շարունակում է մայրս, - հիմա բացատրեմ: Այն մարդը, որուն համար տեսակ մը բժիշկ դարձայ, մեր դրացին է: Բարսեղ է անունը: Շատ բարի եւ պատուախնդիր մարդ մըն է: Ան ալ, մեզի պէս, ընտանիքով, 36-ին Փրանսայէն ներգաղթած է Հայրենիք:

- Դէ ասա պոլսեցի էք էլի, - սա էլ մէկ ուրիշն է:

- Լա՛ւ, թող ատանկ ըլլայ, մենք հայ չե՞նք, - ներքին գայրոյթն ու վրդովմունքը չգսպելով շարունակում է մայրս, - քանի մը օր հիւանդի մը համար ապուր պատրաստելով յանցա՞ք գործած կըլլամ:

- Բայց ո՛ւմ կերակուրից էք բաժին հանել ուրիշին կերակրելու համար, ի՞նչ իրաւունքով, ո՛ւմ հաշուին, - ասում է գինուորականը:

- Որո՞ւ հաշուոյն՝ Ռուսներու... Մի պահ լուռութիւն: Շրջսովետի նախագահ Շահսուվարեանը, որ բազմաթիւ անգամներ իր հիւրերի հետ մայրիկիս ճաշարանի սարքէլ ճաշարանի սննդամթերքով, փորձեց խաղաղութեամբ աւարտել «դատական ակտը».

- Լա՛ւ, ընկերներ, կարծում եմ ամէն ինչ պարզ է: Եթէ ուրիշ արտայայտողներ չկան, եկէք նկատողութիւն ձեւակերպենք ընկեր վերժին Անասեանին՝ վերջին նախագուշացումով, պետական ու-

նեցուացքը ապօրինաբար չըռայլելու խօստումով:

- Ի՞նչ նկատողութիւն..., դատի, դատի պիտի տալ այս կնոջը, - Քէյջլիբին էր արտայայտուողը:

- Ի՞նչ..., դա՞տ..., այդ Ձեզ դատի պիտի տալ, Ձեզ, որ օրեր, ամիսներ շարունակ կերակրուել էք այս ճաշարանում, - էն ետեւի սենեակում, - չգսպելով գայրոյթը՝ անցնելով մաքուր տեղական հայերէնի, գրեթէ ճշալով ասում է մայրս ու շարունակում, - ի՞նչ էք կարծում, ո՛ւմ հաշուին եմ Ձեզ կերակրել՝ Լենինգրադցիների համար տրամադրուած սննդամթերքից:

Մայրիկիս ելոյթը լուռութեան էր մատնել սրահին՝ ուր հաւաքուած էր Արաբկիրի ողջ իշխանական ընտրանին:

Ոչ ոք չէր խօսում, նոյնիսկ Շրջսովետի նախագահ Շահսուվարեանը: Ի վերջոյ, նա էր, որ փորձեց փակել կուսակցական ժողովը՝ հնարաւորինս արագ վերջ տալու համար այդ տհաճ իրավիճակին:

- Ամէն ինչ պարզ է յարգելի կուսակցական ընկերներ: Կարծում եմ ծանր լանցանք չի գործել վերժինէն, ի վերջոյ, նրա շնորհիւ մի մարդ է փրկուել: Եկէք ներենք նրան ու մի պարզ նկատողութիւն տալով աւարտենք այսօրուայ ժողովը: Մի մոռանաք, որ մեր կուսակցութիւնը մեզ սովորեցնում է բարի լինել մարդկանց նկատմամբ եւ հնարաւորինս մեղմ վարուել նրանց փոքր-մոքր յանցանքների համար:

Բոլոր ժողովականները լուրեւեալ ընդունեցին նախագահի առաջարկը: Ձէ՞ որ նրանցից իւրաքանչիւրը օգտուել էր բարեհամբույր երիտասարդ խոհարարուհի տիկին Վերժինէի առատաձեռն հիւրասիրութիւնից:

Այդ պատմական ժողովից յետոյ, երկար չգոյատեւեց Արաբկիրի տարհանուած Լենինգրադցիների համար նախատեսուած ճաշարանը: Նրանք կամաց-կամաց վերադառնում էին իրենց հայրենի քաղաքը:

Շուտով փակուեց հին արաբկիրցիներին ծանօթ այդ ճաշարանը, որը ահաւոր պատերազմի ժամանակ, գրեթէ չորս տարի մի տեսակ Աստուածահաճոյ պարգեւ եղաւ ոչ միայն մեր ընտանիքի, այլեւ մեծաթիւ հարեանների, Արաբկիրի շրջանի ողջ աւագանու, եւ, իհարկէ մեր հերոս, անէկզոտների մեծ վարպետ, միամիտ, բարի ու ազնիւ Բարսեղի համար:

130-Ամեակ Ծննդեան Շահան Ռեթնու Պերպերեան - Ուսուցչապետ, Իմաստասէր, Երաժշտագէտ Երախտագէտի Վկայութիւն

Պոլսոյ երգիչներուն «կոյկոյ»ներէն անհանգիստ, Շահան Պերպերեան Կոմիտաս Վարդապետի պարագային եւս կը կարծէր թէ տարբերութիւն մը պիտի չտեսնէր, եւ սակայն երբ Փարիզի մէջ անձամբ տեսած է Վարդապետը ու լսած իր ձայնը, բոլորովին հիացած գիտցած է հայ երաժշտութեան իսկական արժանիքը եւ ինքն իսկ դարձած երաժշտագէտ:

ԴՊԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Յորեկիանը

Չենք մոռնար մեր երախտարժան ուսուցիչները: Այս տարի կը լրանայ ուսուցչապետ եւ իմաստասէր Շահան Ռ. Պերպերեանի ծննդեան 130 ամեակը ու երախտագէտ սիրով յանուն իր անցեալի աշակերտներուն, որպէս կրտսերը անոնցմէ, պարտք կը զգամ վկայակոչել զինք իր ուսուցչական եւ բարձրագոյն կրթութեամբ յայտնի այս մեծանուն հայրերին որուն վաստակն ու մնայուն արգասիքը վայելեցին Պոլսոյ, Գահիրէի, Երուսաղէմի եւ Անթիլիասի մօտաւոր անցեալի մտաւորական սերունդները: Ինձ համար բացառիկ շնորհք մը եղաւ երեք տարիներու իմ Ընծայարանի ուսանողութեան ընթացքին լսելու Շահան Պերպերեանի իմաստասիրական բանախօսութիւնները՝ փիլիսոփայութեան, բնագանցութեան, հոգեբանութեան եւ ընկերաբանութեան յարակից բաժիններով:

Շահանի անունը անքակտելի կը մնայ իր մեծանուն հօր Ռեթնու Պերպերեանի հիմնադրած Պոլսոյ Պերպերեան Վարժարանին հետ, եւ ապա նոյնանուն կրթական հաստատութեան Գահիրէի վարժարանին շարունակութեամբ, այս ամբողջ իր Շահան Պերպերեանի տեսչութեամբ, հովանիին ներքեւ նախ Կ. Պոլսոյ Պատրիարք Մաղաքիա Օրմանեան Արքեպիսկոպոսին, եւ ապա Եգիպտահայ Թեմի Առաջնորդ Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեանի:

Բարձրագոյն Ուսում

Իսկիւտար ծնած 1891 Յունուար 1-ին, Շահան Պերպերեան չորրորդ գաւակն էր Ռեթնուի եւ Զարուհիի որ իսկոյն հասակ առաւ ուսումնասէր իր ընտանիքին մէջ իր հօր Իսկիւտարի մէջ հիմնադրած յայտնի Պերպերեան Վարժարանին որպէս փայլուն ուսանող: Շրջանաւարտ ըլլալով 16 տարեկանին, այդ տարիքին նոյնիսկ ուսուցիչ կը կարգուէր հօր կողմէ եւ աչքառու կը դառնար իր ֆրանսերէն դասական երկերու թարգմանութեամբ: Սակայն տարի մը ետք հայրը կը կորսնցնէր, մօրմէն եւս որբացած ըլլալով, վարժարանն ու Պերպերեան հարազատները ինամքին կը յանձնուէին Մաղաքիա Պատրիարք Օրմանեանի:

Պատրիարքին քաջալերանքով Շահան Փարիզ կը մեկնէր Սորպոնի Համալսարան իմաստասիրութիւն եւ երաժշտութիւն ուսանելու համար, Պերպերեան Վարժարանը ապահով ձեռքերու յանձնելէ ետք, ուսուցչապետներ ունենալով Սորպոնի ֆրանսացի յայտնի իմաստասէր գիտնականներ Պերկսոն, Տիւմա եւ Տիւրիսէմ: Գրելով եւ յաջողութեամբ պաշտպանելով իր աւարտածառը «Ախտաբանական մեթոտը հոգեբանութեան մէջ» նիւթին շուրջ, կը ստանար ակադեմական վկայականը ու 1911 թուին կը վերադառնար Կ. Պոլսոյ ստանձնելու Պերպերեան Վարժարանի տես-



Շահան Ռ. Պերպերեան

չութիւնը գոր վարեց մինչեւ 1922:

Գահիրէի Պերպերեան Վարժարանը

Պերպերեան հակառակ Թուրքիոյ նորահաստատ Քեմալական Հանրապետութեան ճնշումներուն քաջաբար մնաց Կ. Պոլսոյ պահելով վարժարանին ընթացքը եւ ազգին յանձնելով վերջին շրջանաւարտները: Երկու տարիներ եւս մնաց իր ծննդավայրը, ընտանիք կազմեց, ծնան երկու որդիները Արտաւազդն ու Պարետը, եւ 1924 թուին ընտանեօք փոխադրուեցան Գահիրէ ուր քաջալերանքով իր հօր հիացողներէն Թեմակալ Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեանին վերահաստատեց Պերպերեան Վարժարանը:

Գահիրէի վարժարանը տասը տարուան կրթական բեղուն շրջան մը բոլորեց նախակրթարանի եւ երկրորդականի բաժիններով, միջին հաշուով տարեկան 100 աշակերտներով, իր եղբօր Օննիկ Պերպերեանի ուսուցչութեամբն ու Արմենակ Կամսարականի, Տիգրան Հաճընլեանի եւ այլոց նիւթական օժանդակութեամբը: Վարժարանի ուրոյն կալուածն ու յարմարութիւններ ունեցող լաւ դիրքն ու համբաւը սկսան տնտեսական կարիքները բազմապատկել, երբ նոյն տարիներուն Թորգոմ Արքեպիսկոպոս Երուսաղէմի Հայոց Պատրիարք ընտրուելով պիտի մեկնէր: Հակառակ Սրբազան Հօր նշանակած ինամակալ մարմին, Պերպերեան Վարժարան իր վերջին շրջանաւարտները հասցուց 1934-1935 տարեշրջանին ու փակեց իր դռները: Շահան, Պարիարք Հօր կողմէ Երուսաղէմ հրաւիրուեցաւ որպէս դասախօս ժառանգաւորաց եւ Ընծայարանին, իսկ Օննիկ Պուքրէշ որպէս տնօրէն ազգային վարժարանին:

Երուսաղէմի Սեջ

Եթէ կարճ տեւեց Գահիրէի կրթարանին ընթացքը, նախաինամական եղաւ Պերպերեանին Երուսաղէմ մեկնելը ուր դաստիարակեց թիւով եւ մանաւանդ որակով բազմարդիւն հոգեւորական եւ աշխարհական ուսանողներ, իրեն պաշտօնակից եւ յայտնի գրագէտ քննա-

դատ Յակոբ Օշականի հետ միասին: Շահան Պերպերեան Յակոբ Օշականի գրականութեան միացուց իմաստասիրական գիտութեանց իր բացառիկ ներդրումը եւ շրջան-աւարտ հոգեւորականներ կրկնակի դրոշմը կրեցին՝ հայ գրականութեան եւ եւրոպական արուեստի գոր մշակեցին հետագային մնայուն աշխատանքի դաշտ դարձնելով զանոնք իրենց ասպարէզին մէջ:

Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանուց մէջ յաճախ բեմադրուեցան Պերպերեանի պատրաստած տրամախօսութիւններն ու իմբերգները որոնց երաժշտութեան ներդաշնակողը ինքն էր եղած, եւ երբեմն ալ Օշականի գրականութիւնն էր որ զգեցաւ Պերպերեանի երաժշտութիւնը: Որպէս երաժշտագէտ Շահան Պերպերեան Երուսաղէմի մէջ Դուրեան Եղիշէ Պատրիարքի եւ Վահան Թէքէեանի որոշ գործերուն վրայ եւս յօրինումներ



Ռեթնու Պերպերեան

կատարեց եւ իր նախաձեռնութեամբ հիմնեց Երուսաղէմի Հայ Երաժշտական Միութիւնը: Մեծն Կոմիտաս Վարդապետի չիշատակին իր վախճանման առիթով, 1935 Նոյեմբեր 17-ին Շահան Պերպերեանի ղեկավարութեամբ սգահանդէս մը տրուեցաւ Սուրբ Քաղաքին մէջ իր իսկ բանախօսութեամբ: ՄիՈՒ ամսագրի 1936 տարուան թիւերէն մէկուն մէջ իսկոյն հրատարակուեցաւ իր բանախօսութիւնը

աւելի ընդարձակ եւ ուսանելի բովանդակութեամբ՝ «Կոմիտաս Վարդապետի անձը եւ գործը» խորագիրով գոր կարդալու երախտիքը ունեցած են:

Անթիլիասի Դպրեվանքին Սեջ

Մեծի Տանն Կիլիկիոյ նորընտիր Հայրապետ Տ. Տ. Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոսի հրահրով Շահան Պերպերեան Երուսաղէմէն Անթիլիաս կը ժամանէր 1944 թուին դասախօսելու Անթիլիասի Դպրեվանքի ընծայարանի ուսանողութեան ուր մնաց մինչեւ 1956:

Հոն եւս որպէս գերագանց ուսուցիչ դաստիարակեց սերունդներ մինչեւ անժամանակ մահը նոյն տարին 65 տարիքին: Տասներկու տարիներու ընթացքին հարիւրաւոր աշակերտներ շատ անսովոր իմաստասիրական նիւթեր սերտեցին, իսկ ժառանգաւորաց բաժնին հայ լեզու եւ գրականութիւն աւանդեց՝ արժանանալով բոլորի հիացումին:

Դպրեվանքէն ներս Պրն. Պերպերեան երաժշտութեամբ եւս զբաղեցաւ տալով մեզի դասական երաժշտութեան ճաշակը իր իսկ յօրինած իմբերգներն ու պարերգները սորվեցնելով: Կարեւոր բաժին ստանձնեց Գարեգին Վեհափառ Կաթողիկոսի յոբելինական հանդիսութեանց մէջ 1947 թուին: Յիշողութեանս մէջ վառ կը մնայ Շահան Պերպերեանի դաշնաւորած Յովհաննէս Թումանեանի «Լուսաւորչի Կանթեղը» որ կը նկատուի իր գլուխ գործոցը: Առանձինն դաշնամուրին վրայ նուագելով կ'երգէր եւ չէր ուզեր ներկայութիւն մը սրահէն ներս, եւ սակայն ուսանողներս գիտնալով սրահի մուտքի դրան արանքէն կը տեսնէինք ինչ եռանդով, ձայնով եւ զգացումով կ'երգէր «Լուսաւորչի Կանթեղը»: Յայտնի ինքնիրենս կ'երգեմ զայն բարձր գնահատելով այն հոյակապ թուիչքն ու ձայներու ելեւէջները որոնք կեանք տուած են Թումանեանի բանաստեղծութեան:

Երախտիքի սոյն գիրով կոչ մըն է որ կ'արձանագրեմ չմոռնալ մեր մեծերը ժամանակի հոլովոյթին մէջ: Գիտնանք անոնց իսկական արժէքը ներկայ ժամանակներու անստոյգ եւ անորակ արագընթացին մէջ:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel :-----
 Email: -----

Մայրութեան, Գեղեցկութեան Տօնը

Ուզում եմ, որ գրականութիւնը օգնի մարդուն իր կեանքը իբրև արեւ ապրելու

Վարդգես Պետրոսեան



ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Գլենտել գոլէճում ուսանելու ատեն, Նինա Ռոզէն անունով ուսուցչուհին իր խմբին շրջագայութեան էր տարել Փասատինայի Հանտինգտոն բուսաբանական պարտէզ: Կարմիր կրակով թեթացած վարդի թփերի կողքից անցնելու ատեն, նրան խնդրել էի մի պահ կանգնել, նայել վարդերին, «Երկար նայիր», ասացի, «Կարող էս յագենալ նրանց գեղեցկութեամբ», արդեօք պիտի կարողանա՞ր...:

Նաեւ հարցրել էի, մայր բնութեան արարած ամէնագեղեցիկն ի՞նչն է, մի պահ խորհեց, յետոյ, թէ այո, անշո՛ւշտ «Հագար-Հագար Գոյնի արեւով Պճնուազ Մաղիկները»: Շարունակելով իօսքս հարցրել «Հապա ուրիշ ի՞նչը»: Նորեն խորհեց, չպատասխանեց, խնդրեց ես պատասխանէի: Մի պահ լռեցի, նայեցի նրա դէմքին հոսած հրաշավառ ժպիտին, պատասխանեցի՝ «Կինը», յետո՛յ արեւը, լոյսը, կրակը, հողը: Մայր բնութիւնը նրան օժտել է ծիա-

ծանի հրաշագեղ գեղեցկութեամբ, դէմքին հոսել առեղծուածին ժպիտ, ակներին լոյսի շանթեր, քայլուածքին նագանք, կեանքի յարատեւութեան խորհուրդ մեծ: Կինը Աստուծոյ ամէնագեղեցիկ ստեղծգործութիւնն է:

ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՓՐԿԻ ԱՇԽԱՐՀԸ

Չեմ գիտեր ո՞վ էր առաջինը մէջբերել այդ ասոյթը, այն ճշմարիտ է, բարութիւնը ու սէրը կը փրկեն աշխարհը: Գեղեցկութիւնը, իրականութեան ու արուեստների մէջ գեղագիտական արժէք է: Որոշ իմաստասէրներ այն բնութագրում են վերացական ոգու սկզբունքով, ուրիշներ անհատ մարդու զգացական գիտակցութեամբ, իսկ այլք էլ այն բացատրում բնութեան օրինաչափութիւններով, համաչափութիւններով: Հինգերորդ դարի Հայ մտածողներ ընդգծել էին գեղեցիկի՝ բարու ու մարդկային հոգեւոր արժէքների հետ կապը: Գեղեցիկ համարուած մարդու ժպիտի խորքում բարութիւն արարելու խորհուրդ կայ, դիւահար մարդկանց

դէմքերից հարութեան գայարումների յորձանք է պայթում: Գեղեցիկի ընկալումը անմիջական է, երեւում իրերի արտաքին տեսքի վրայ, անհատի կենսափորձով ու իրերի բովանդակութեան մասին դատելու կարողութեամբ: Չէ, գեղեցկութիւնը ոգի է, լոյս է, արեւի հագար գոյնների ճախրանք է, այն տիրում է մարդու ոգեղէն աշխարհին՝ ծիրանափողերի սիրոյ անուշ երգերով, Արարատի լանջերի հագար-հագար գոյնի ձնածաղիկի սրտից ծնած Աստղիկ դիցուհիւ ժպիտի կրակից:

1857 թուականի Մարտի 8, Նիւ Եորք, Հիւսուածագործները երթով անցել էին քաղաքի փողոցներով, բողոքել աշխատանքի վատ պայմաններից ու աշխատավարձերի չափերից: Այդ իրադարձութիւնն էր ընկել տարիներ անց կանանց տօնի հիմքում: Հին Հռովմում կանանց տօնը կոչուել էր «Ազատ Ծնուած Կանանց Տօն»:

1857 թուականի «Դատարկ Կաթսայի Երթ»-ին մասնակցած կանանց թոռները, 1908 թուականի նոյն օրը, պահանջել էին երեխաների աշխատանքի արգելք, աշխատանքի պայմանների բարելավում եւ կանանց իրաւունքի շնորհում: Յաջորդ օրը Ամերիկայի Միացեալ Նահանգների սոցիալիստական կուսակցութիւնը Փետրուարի վերջին կիրակին յայտարարել էր «Կանանց Ազգային Օր»: 1910 թուականին, Կոպենհագենում, կանանց միջազգային համաժողովի ժամանակ, Կլարա Յետկինն առաջարկել էր «Կանանց Միջազգային Օր»-ը նշել Մարտի 8-ին՝ ի չիշատակ Նիւ Եորք-եան իրադարձութեան: Ռուսաստանում այդ օրը նշուել է 1913 թուականից: Խորհրդային Միութիւնում Մարտի 8-ը, 1965 թուականից համարուել էր ոչ աշխատանքային օր:

Մարտի 8, այն տօնախմբել էին նաեւ Հայաստանում, կանայք մասնակցում են երկրի կառավարման, օրէնսդիր մարմինների եւ գիտութեան ու մշակոյթի բնագաւառների աշխատանքներում: Կանայք, ժողովուրդի ու հայրե-

նիքի համար անհատականութիւն են, գարնան գալուստի աւետումն են: «Արայի Գահ-Արագած»-ի լանջերի ձիւնից քաղած հագար գոյնի ձնածաղիկի փունջեր են մատուցում նրանց: Գարնան փառաբանութիւնով՝ բնութեան արարած կանանց ոգեղէն հրաշքի փառաւորումը նաեւ կայ: Կին, գարնան գարթօնքի, ծաղկած ծառերի գեղեցկութեան ու մայրութեան խորհուրդն է այն:

Բիւզանդիոն, Կոստանդնուպոլիս, այնտեղ նաեւ եղել Արմին-Հայ ցեղի արուեստների, մշակոյթի, բանաստեղծութեան արարում, եթէ Աստուած թուրք ստեղծած չլինէր, Պոլիս, Մեծ Հայք, Կիլիկիա կը լինէին աշխարհի գիտութեան ու մշակոյթի արարման կեդրոններ: Արեւմուտքում, կնոջ իրաւունքների պաշպանութեան պայքարից շատ առաջ՝ Բիւզանդիոնում Հայ մտաւորականներ, մասնաւորապէս կին հանձարեղ ստեղծագործողներ՝ Սիրանուշ, Ջապէլ Ասատուր, Սիպիլ, Դիւսաբ, Ջապէլ Եսայան, Շուշանիկ Կուրդիւնեան՝ իրենց երկերով, իրենց իրաւունքների համար պայքարի կոչել կանանց, նրանց հոգիներում վառել մեհեանների ազատութեան լոյս՝ Անահիտ, Աստղիկ, Նանէ, Նար Ծովինար երկիր կը վերադառնային:

Հայաստանի անկախութեան առաջին տարիների՝ Մարտ 8-ի տօնը համարուել էր «Սովետական», փորձ արուել այն չեղեալ համարել: Սակայն, Մարտի 8-ին կանանց ու մայրերի հանդէպ չարգանքի, սիրոյ, նուրիւածութեան, նրանց ծաղիկներ ու նուէրներ մատուցելու աւանդոյթի չիշողութիւնը ոգելոյս էր եղել նրանց, որոշել էին նորէն այն նշել: Հայաստանի խորհրդարանը 2001 թուականին «Վերակենդանացրել» է Մարտի 8-ի տօնակատարութեան խորհուրդը, այդ օրը նորէն ոչ աշխատանքային օր հռչակել: Թէեւ այն տօնում է մի շարք երկրներում, սակայն, համաշխարհային տօնի բնոյթ չունի:

Շար.ը էջ 19

COVID-19 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԹԱՐՄԱՑՈՒՄ

ԵՐԲ ԵՔ ԻՐԱՎԱՍՈՒ ՁԵՐ ԱՆՎՃԱՐ COVID-19 ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻՆ:

<p>Փուլ 1A: Առողջապահության բոլոր աշխատողներն ու ծերանոցի բնակիչները և անձնակազմը:</p>	<p>Փուլ 1B: 65+ տարեկան, գյուղատնտեսության, սննդի, կրթության և արտակարգ իրավիճակների ծառայության աշխատակիցները:</p>	<p>Մարտի 15-ի դրությամբ. 16-64 տարեկան անձինք, ովքեր ունեն առողջական պրոբլեմներ կամ հաշմանդամություն:</p>	<p>Ապրիլի 1-ին: Ցանկացած 50 տարեկան և անց</p>	<p>Ապրիլ 15-ին: Los Angeles Վարչաշրջանի բոլոր բնակիչները (16+ տարեկան)</p>
---	--	--	--	---

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք VaccinateLACounty.com կայք:

«Եւրոպան Պէտք է Բանայ Աչքերը եւ Դադի Լռելէ»: Եւրախորհրդարանի Երեսփոխանը Եռաբլուր Այցելած է



Եվրախորհրդարանի երեսփոխան Ֆրանսուա Քասալի Պելամին այցելած է Եռաբլուր գինուորական պանթէոն, որմէ ետք գրառում մը կատարած է ընկերային ցանցի վրայ եւ ատոր կից հրապարակած է լուսանկարներ:

«Եռաբլուր գինուորական գերեզմանատուն: Այս հազարաւոր դրօշներէն իւրաքանչիւրի տակ գինուոր մը ամփոփուած է, որ զոհուած է անցեալ տարի՝ Հայաստանը պաշտպանելով յարձակումէն: Անոնց մեծ մասը գրեթէ 20 տարեկան էր: Եւրոպան պէտք է բանայ աչքերը եւ վերջապէս դադրի լռելէ», - ֆէյսպուքեան իր էջին վրայ գրած է Ֆրանսացի

քաղաքական գործիչը:

Երեսփոխանը իր գրառումն ամփոփած է Լուի Արակոնի «Կարմիր պատառ» բանաստեղծութեան քառեակով, որ գրուած է Միսաք Մանուչեանի խումբի յիշատակի յաւերժացման առթիւ՝ 1954 թուին:

«Մնաք բարով թախծ ու խիճո, Մնաք բարով վարդեր, Մնաք բարով կեանք, մնաք բարով լոյս ու քամի:

Ամուսնացիր եւ երջանիկ եղիր, իմ մասին ալ յաճախ մտածէ:

Դուն, որ պիտի շարունակես ապրիլ հիասքանչ աշխարհին մէջ, Երեւանի մէջ - հետո, երբ ամեն ինչ ավարտվի»:

Չհատենք Կործանման Եզրագիծը

Շարունակուած էջ 2-էն

ապա այսօրուայ սխալների հետեւանքով՝ վաղը, եթէ ոչ վաղը, ապա՝ միւս օրը, բայց այսօրուայ սխալների հետեւանքով մենք կարող ենք ամէն ինչ ու անվերադարձ կորցնել:

Այս պարտութիւնից պէտք է ուշքի գալ: Երկրում կայունութիւն հաստատել ու զար-

գացման ուղիներ մշակել: Ամրապնդուել ու նորովի ներկայանալ աշխարհին: Մեր հարեւանների հետ խօսելու նոր ճանապարհներ ու ձեւեր գտնել՝ առանց նախապաշարումների, առանց անցեալի բեռի՝ թեթեւացած ու անկաշկանդ՝ ապագայով, այլ ոչ անցեալով պայմանաւորուած:

«ԱԼԻՔ»

Աշխարհատեսակաւ Ծանապարհներ

Շարունակուած էջ 13-էն

մէջ: Մինչ ազատ գօտիին ստեղծումը առիթ կ'ընծայէր մասնաւորաբար իրանեան ներդրումներու ներգրաւման Հայաստանի մէջ, անդին իրան կ'օգտուէր Եւրասիական տնտեսական միութեան անդամ ըլլալու Հայաստանի հանգամանքէն:

Ինչ կը վերաբերի ուժանիւթի մարզին մէջ երկու երկիրներու յարաբերութեան, անիկա կը մնայ սահմանափակ, հակառակ այն իրողութեան, որ որոշ ծրագիրներ արդէն իսկ իրագործուած են, օրինակ՝ Իրան-Հայաստան կազատարը 2006-ին՝ Հայաստանի կարիքները գոհացնելու նպատակով: Տնտեսական միջանցքներու պարագային, երկու երկիրներն ալ կը գիտակցին գոյութիւն ունեցող ծրագիրներու մեծ կարեւորութեան, ինչպէս Հայաստանի 470 քմ երկարութեամբ երկաթուղագիծին եւ 556 քմ երկարութեամբ Հիւսիս-հարաւ մայ-

րուղիի իրականացման:

Կարելի է եզրակացնել, որ միջանցքներու տնտեսութիւնը՝ արդի աշխարհակայութեան մէկ դրսեւորումը, մասնաւոր աշխարհագրական մեծ տարածութիւններ իրարու կապելու առումով, հիմնական դերակատարութիւն սկսած է ունենալ արտաքին քաղաքականութիւններու մշակման ատեն: Իրան ցարդ նայած է դէպի արեւելք, հարաւ ու արեւմուտք, իսկ դէպի հիւսիս իր արեւելումը սկսած է զարգանալ վերջին տարիներուն: Այսպէս է որ կը դրսեւորուի իրանի աշխարհաքաղաքական կարեւորութիւնը Հայաստանի համար:

Սակայն, պէտք է զգուշ ըլլալ երկու կացութիւններէ. Հայաստանի հիւսիս-հարաւ մայրուղիին եւ երկաթուղագիծին կառուցման ուղացումէն, եւ իրանի համար այլընտրանքի՝ դէպի Ատրպէյճան թեքումէն: Պէտք չէ մոռնալ որ իրանցիք գործնապաշտ մարդիկ են...

www.civilnet.am

Արտահերթ Ընտրութի՞ւն

Շարունակուած էջ 2-էն

թիւնը, Եւրասիական վեկտորից բացի՝ Հայաստան-ԱՄՆ, Հայաստան-ԵՄ, Հայաստան-Չինաստան, Հայաստան-արաբական աշխարհ յարաբերութիւնները: Ինչպէս են քաղաքական ուժերը տեսնում հայկական բանակի ապագան, մոդելը: Այն շարունակում է մնալ խորհրդա-ուսումնական տրամաբանութեան մէջ, թէ՞ առարկայօրէն գործակցում է այսօր առաջատար ռազմատեխնիկական եւ մոդելային բեւեռների, այդ թւում՝ ՆԱՏՕ-ի հետ՝ առանց, իհարկէ, ան-

դամութեան խնդիր դնելու: Մտածել, թէ Հայաստանը կը ստանայ բոլոր հարցերի սպառիչ պատասխան, կը լինի միամտութիւն: Անգամ բոլոր հարցերը քննարկել հազիւ թէ յաջողուի: Սակայն նախընտրական շրջանը պէտք է թերեւս աչքի ընկնի նրանով, որ մասնակիցները չպէտք է դադար կամ ազատ ժամանակ ստանան զգալական մանիպուլիացիաների համար: Նրանք պէտք է անընդհատ լինեն հարցերի տարափի տակ, հանրային ամենատարբեր հարթակներից:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմ

Շարունակուած էջ 14-էն

ճշմարտութիւն եւս ըսաւ: «Քաղաքներուցէք», - ըսաւ Ան «Ես յաղթահարեցի աշխարհը»: Այդ նոյն խոստումն է, որ մենք բոլորս պէտք է լսենք, երբ կը դիմազրաւենք մեր սեփական մեծ ու փոքր գողգոթաները. երբ մենք մեր Տէր Յիսուսին կը միանանք խաչի վրայ: Անիկա այն հաւատքն է, որ մեր հայնահատակները պատմութեան ընթացքին, մինչեւ մեր օրերը, իրենց կեանքը գիտակցօրէն տուած են: Անիկա այն պարտականութիւնն է, որ մենք կը ստանանք, երբ մենք

կ'որոշենք Քրիստոսի Մարմինը կառուցել մեր իսկ կեանքին մէջ, մեր ընտանիքներուն, մեր ծուխերուն, մեր հայրենիքին եւ մեր աշխարհին մէջ:

Այդ նոյն պատգամն է որ մեր ականջներուն մէջ պէտք է հնչէ, այս տարի եւ ամէն տարի, երբ լսենք այս խորհրդաւոր խօսքերը, որոնք միշտ մեր ժողովրդին եւ Քրիստոսի բոլոր ճշմարիտ աշակերտներուն օգնած են յաղթահարելու աշխարհը:

Քրիստոս Յարեալ Ի Մեռելոց: Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:

Տապալուած Գիրքեր
«Տարին, Որ Անցաւ»
Հեղինակ՝ Գեորգ
Պետիկեան
(Պատմուածքներ)
Փասատինա 2021

#ArtsakhStrong
#GlobalArmeniansUnite
**WE ARE OUR BORDERS.
ALL FOR ARTSAKH.**
Donate Now

**TO DONATE VISIT
WWW.ARMENIAFUND.ORG/DONATE**

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

ԼՈՒՍԻԿ ՄԵԼԻՔՆԵԱՆԻ մահուան առթիւ իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի գաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն: Առ այդ կը կատարեն հետեւեալ նուիրատուութիւնները «Մասիս»ին:

Տէր եւ Տիկ. Յարութ եւ Լուսին Պոյամեան \$200
 Տէր եւ Տիկ. Արա եւ Վերժինիա Պոյամեան \$100
 Տիար Ռաֆֆի Պոյամեան \$100
 Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Օսան Տազէսեան \$100
 Տէր եւ Տիկ. Յարութ եւ Սիւզի Չարըքեան \$60

Մայրութեան, Գեղեցկութեան Տօնը

Շարունակուած էջ 17-էն

Հիմա, Հայաստանում մայրերին նուիրուած երկու տօնական օրեր կան՝ Մարտի 8 եւ Ապրիլի 7, որպէս «Աւետման Օր»: Ամերիկայի Միացեալ Նահանգներում մէկ ամիս շարունակ այն տօնում է որպէս «Մայրութեան եւ Գեղեցկութեան Օր»: Մարտի 8-ը՝ նշանակուած է որպէս «Կանանց Միջազգային Օր», Ապրիլի 7-ը փառաւորում՝ մայրութիւնը, մայրերին, գեղեցկութիւնը: Այդ օրը՝ «Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի»-ն պատարագում է որպէս «Մարիամ Մակտեղենացի Կոյս»-ի աւետման օր: Հայաստանում, «Մայրութեան ու Գեղեցկութեան Օր»-ը հանրային տօն է, այն տօնախմբում է յարգանք արտայայտելու կանանց ու մայրերի հանդէպ, ցուցաբերում սէր ու նուիրում նրանց նկատմամբ: Այդ օրը ընդունուած է նրանց ծաղիկներ, հայոց աշխարհում նոր բողբոջած նարկիզներ, «Արայի Գահ» լերան լանջերի ձիւնը պատուած ձնծաղիկի փունջեր նուիրել: Երեխաները, իրենց պատրաստած բացիկներ, յուշանուէրներ նուիրում մայրիկներին, շնորհակարարութեամբ նրանց տօնը:

Ուժով, երկարամեայ կռիւներով պոկեցին Արմին-հայերի

հոգիներից հայոց աշխարհի Մայր Անահիտի Ապրիլի 6-ի ծնունդը, այն կոչեցին՝ «Աւետման Օր», որ իրենց Գաբրիել հրեշտակը Խարայի անմեղ մի կոյսին աւետել, որ ինն ամիս յետոյ, յաջորդ տարուայ Յունուարի 6-ին, լոյս աշխարհ պիտի բերէր իրենց երկրի Փրկիչին: Չէ, չեմ ուզում մեկնաբանութիւն անել, որ հազարհազար Արմին-հայերի հոգիներին թախիծ չպատճառեմ: Չէ, ես ուզում եմ փառաբանել իմ հեռու հեռու նախնիների Անահիտ դիցուհուն, նրանց բնութեան սքանչանքի հաւատքը, որոնք աստուածացրել էին բնութեան երեւոյթներ՝ կրակ, լոյս, մայրութիւն, գեղեցկութիւն, անձրեւ, բարութիւն, սէր, երկունք, կռիւ ու յաղթանակ: Մայր Անահիտ: Արմին-Հայ արի մարդ, քու ցեղի մայրը՝ Մայր Հայաստանն է, քու մայր ուստանի բլուրի գագաթին յաղթ կանգնած, սուրը պատեանից կիսատ հանած, պատրաստ գրոհի տանելու կանանց, ազգի քաջերին:

Անահիտ, «Մայր Բոլոր Զգաստութեանց», «Ոսկեծին, Ոսկեմայր, Ոսկեհատ հայոց Աշխարհի Դիցուհի», այդպէս էին անուանել նրան՝ Երիզա աւանի մեհեանի ոսկեծոյլ արձանի ու նրա պատուին, միայն նրա պատուին է:

էին ոսկեծոյլ արձան կերտել: Կրակի աստուած՝ Արա-յի դուստրն էր հայոց ամէնասիրելի ու պաշտելի «Մեծ Տիկին» Մայր Անահիտը: Նա պատկերուած էր երեսնամեայ գրկին, Հայ մայրերի յարգարանքով, մինչեւ ուները իջնող գլխաշորով: Անահիտի պաշտամունքը յափշտակած մարդիկ, իրենց աստուածածին Մարիամը պատկերել են նոյն յարգարանքով ու Մանուկ Յիսուսը գրկին սեղմած: Աշխարհ իմանա՛, որ Աստուածամայր Մարիամի մայրութեան պաշտամունքը, հայոց աշխարհի Մայր Անահիտի պաշտամունքի նոյնացումն է: Մայր Անահիտ, բարի ու բարերար, Արմին-Հայաստան արարչական երկրի խոհեմութիւնների խնամակալը, մայրութեան ու պտղաբերութեան մարմնացումը: Հայոց Արա աստուծոյ գլխաւորութեամբ, նրա դուստրեր՝ Անահիտը, իմաստութեան ու ողջախոհութեան, մանչերի հովանաւոր, տան օժախի ու մայրերի երկունքի պահպան Նանէ դիցուհին, արեւի ու լոյսի աստուած Միհրը, հայոց դիցարանի երրորդութիւնն են, ինչպէս «Հայր, Որդի, Սուրբ Հոգի» նմանակումը: Անահիտի մայրութեան պաշտամունքի ծագման ու ծնունդի վայրը «Հայկական Սրբազան Լեռնաշխարհ»-ի Այրարատ աշխարհի Մեծամորում էր, «Մեծ Մայր» իմաստով: Անահիտի մասին տեղեկութիւններ են հաղորդուել պարսից Աւեստա մատենանում, նրա պաշտամունքը տարել հայոց աշխարհից, իրենց հաւատքում իրական աստուածութիւն չկար: Պատմահայր Խորենացին հաղորդել, որ նրանցից առաջ հայոց աշխարհում դիցաբանութիւն եղել: Մայր Անահիտ դիցուհու մայրութեան կերպարը, Արմին-Հայի հոգեկան ու մտաւոր զարգացման կատարելիութիւնն է:

Մայր Անահիտին վերագրուել էր նաեւ բժշկական ունակութիւններ, Արտաշէս անուշ թագաւոր, Միջագետք գնացել յոյների ու պարսիկների միջեւ ծագած սահմանային վէճը որպէս իրաւարար լուծելու, հիւանդացել էր, նրան ուղեկցող իշխանը գնացել Անահիտի Երիզայի մեհեան բժշկութիւն հայցելու իր հիւանդ թագաւորի համար: «Մեծ Անահիտ տիկին, Փառք ազգից մերոյ եւ կեցուցիչ մայր բարերար ամէնայն մարդկանց բնութեան»: Նա բնութագրուել էր նաեւ որպէս ողջախոհութեան, առաքինութեան ու արդարադատութեան մարմնացում: Ըստ Արմին-հայերի իմաստութեան, մայրն է ընդունակ արդարամիտ լինելու ու արդար դատելու: Հայ աշխարհի

մարդիկ, նորէն լցրէ՛ք ձեր հոգիները ձեր նախնիների պաշտամունքի արդարամտութեան, արդարադատութեան իմաստութեամբ: Ուրիշ ցեղի արդարամիտ ու իմաստուն հուշակուած թագաւորը, մանուկի մայրիկին յայտնաբերելու համար, այդ նոյն մանուկի վրայ սուր բարձրացրել՝ ուղեցել երկու կէս անել, այն տալ երկու մայրերին, ահա այդպէս էր դատել նրանց թագաւորը եւ իմաստուն համարուել...:

Անահիտ, հայոց աշխարհի հանդերին մայրական գորովի շունչ յորդել: Դաշտերում ցորեանի ալիքուած ծովեր, ծաղկած ցորեանի հասկերի անուշաբոյր բուրմունք, գեփիւռի հետ պարբունած ոսկի հատիկներով լեցուն հասկեր: Այգիների ծառերի թեւերին ծիածան, նրանց ոստերին հազար-հազար գոյների ճարմանդներ կապել, որոնք հովիկների զարկերով անուշ մեղեդիներ հնչում: Գարնանը, հայրենի Մուսա լեռան գագաթի բացատների ձիւնը մատներովս փորելով ձնծաղիկի փունջեր կապել, գնացել մեր տան այգի կթոցով նարինջ ու նորաշխարհ քաղել: Հօրաքրոջս տան թանքած ձիւն հեծած, պեղաւի նման թռել, հասել Երիզա աւան, մտել Անահիտի մեհեան, բուռ-բուռ նարինջ ու նորաշխարհ դրել նրա բագինի առաջ, սփռել ոսկէ իրանին: Հասել աստուածների քաղաք Աշտիշատ, Վահագնի ու Աստղիկի հարսանեաց հանդէս էր, Վահագնի թագի վրայ նարինջ լցրել, Աստղիկի թագին ու հարսանեաց ճերմակ հագուստին նորաշխարհ փռել, նրանց հատիկները ոսկեջուրի նման հոսել իրանից, ձնծաղիկներ նետել սպիտակ թագին ու հագուստին: Հարսանիքի փեսեղբայր՝ Միհրը, հարցրել, «Ո՞րտեղից եւ ո՞վ ես դու»: Աստուածների առաջ կանգնած պատասխանել՝ «Իմացել եմ, որ Արմին-հայեր, իրենց Վահագն աստուծոյ հետ, Հայոց Սրբազան Լեռնաշխարհից վնասել էին դուշմանին, երկիր վերադարձել էի աստուածների օրհնութիւնը հայցելու, ճանապարհին հանդիպել երկիր վերադարձող մարդկանց բազում կարաւաններին:

Արմին-Հայ արի մարդ, Ապրիլի եօթը տօնախմբի՛ր որպէս Մայր Անահիտի ծնունդ, «Մայրութեան ու Գեղեցկութեան Տօն», գնա՛ կանգնի՛ր «Մայր Հայաստան»-ի առաջ, ձնծաղիկ ցանիւր նրա բագինին, երկրի քաջերի երգեր երգիր նրա համար, հրճուանքից կը լացի...: Մայրութիւնը, երկիր մոլորակում «Բնութիւն-Աստուած» ներկայութիւնն է:

Sous Chef and Cook for Lebanese Kitchen in Studio City, CA




An authentic Modern Mediterranean Restaurant and Hookah Lounge is looking for a Sous Chef and a Cook for a Lebanese kitchen.
 Job Type: Full-time

REQUIREMENTS / QUALIFICATIONS:

- Minimum 5 years of experience.
- Knowledge in a Lebanese / Mediterranean kitchen is MUST: Cold & hot Appetizers, Salads, Soups, Shawarmas & Wraps, Deserts.
- Knowledge in Kabob marination and cooking is preferable.
- Inventory Management skills. • Detail orientation and cool under pressure.
- A self-motivator, who works clean and stays organized.
- Respect for coworkers and a team player mentality is essential.
- A desire to learn, grow and be a future leader also encouraged.

Starting \$20-25 / hour

For mor Information
 Phone: (323) 468-0056
 Email: suren@oliveandgrill.com
 Address: 12229 Ventura Blvd, Studio City, CA, USA



NATIONAL NOTARY ASSOCIATION
 NOTARY PUBLIC

MEMBER

Garine Depoyan

626-755-4773
 554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106
 ghdepoyan@gmail.com

Հայաստան Բացառիկ Յաղթանակ Արձանագրեց Ռուսներին Դեմ



Ֆուտբոլի Հայաստանի Ազգային խումբը հերթական յաղթանակը տարավ Աշխարհի առաջնութեան ընտրական փուլին:

Հայաստանի հաւաքականը սեփական յարկի տակ ընդունելով Ռուսներին ընտրանին առաջին խաղակէսը առանց կոլերու:

Երկրորդ խաղակէսին հաշիւը 56-րդ վայրկեանին բացաւ իր նորամուտը նշող Էտուարտ Սպերցեան: Խաղի 62-րդ վայրկեանին Ալեքսանտրու Չիքալտաուն հաւասարեցուց հաշիւը, այնուհետեւ 72-րդ վայրկեանին «տուպլ» ձեւակերպեց:

77-րդ վայրկեանին Ալեքսանտրու Փուշկաչը հեռացուեցաւ խաղադաշտէն կոպիտ խախտման համար: 10 հոգիով մնացած ռուսներին չկարցան դիմակայել Հայաստանի հաւաքականի ֆուտբոլիստներու ճնշման. խաղի 87-րդ վայրկեանին Վարազդատ Հարոյեան հաշիւը հաւասարեցուց, իսկ 89-րդ վայրկեանին Տիգրան Բարսեղեանը յաջող իրացուց 11 մեթրանոց հարուածը՝ հաշիւը դարձնելով 3:2:

Երեք խաղէ ետք Հայաստանի ընտրանին 9 միաւորով կը գլխաւորէ J խումբի աղիւսակը: Գերմանիոյ հաւաքականը 1:2 արդիւնքով անակնկալ պարտութիւն կրելով Հիւսիսային Մաքետոնայի դէմ խաղին, 6 կէտով կը գրաւէ երկրորդ տեղը:

«Ալաշկերտը», «Արարատ», «Արարատ-Արմենիա» Եւ «Նոա» Հասան Հայաստանի Գաւաթի Կիսաեզրափակիչ

Ֆուտբոլի VBET Հայաստանի գաւաթի խաղարկութեան կայացաւ քառորդ եզրափակիչ փուլի պատասխան վերջին խաղը:

Առաջին խումբէն ներս հանդէս եկող ԲԿՄԱ-ն Երեւանի «Հանրապետական» մարզադաշտին վրայ հիւրընկալեց «Ալաշկերտին»: Խումբերու առաջին խաղը աւարտած էր ալաշկերտցիներու վստահ յաղթանակով՝ 4:0:

ԲԿՄԱ-ն պատասխան խաղին փորձեց գոնէ յաղթել իր փորձառու մրցակիցին, որպէսզի լաւ աւարտ ունենայ գաւաթի խաղարկութեան, սակայն «Ալաշկերտը» այս անգամ ալ ցոյց տուաւ իր բարձր կարգը եւ կրկին պարտութեան մատնեց բանակային ֆուտբոլիստներուն՝ 2:1:

Այդպիսով, «Ալաշկերտը» հասաւ Հայաստանի 2021թ. գաւաթի խաղարկութեան կիսաեզրափակիչ, ուր անոր մրցակիցներն են «Արարատը», «Արարատ-Արմենիան» եւ «Նոան»:



«Սեւիլիան» Ուժեղ էր «Աթլետիքոյէն»

Սպանիոյ առաջնութեան 29-րդ հանգրուանին առաջատար «Աթլետիքոն» մրցակիցի խաղադաշտին վրայ հանդիպեցաւ «Սեւիլիայի» հետ: Արժենթինացի Դիեգո Սիմէոնէի գլխաւորած խումբը պարտութիւն կրեց նուազագոյն հաշուով:

Մրցումի միակ կողմը 70-րդ վայրկեանին նշանակեց դաշտի տէրերու արժենթինացի կիսապաշտպան Լուկաս Օկամփոսը:

«Աթլետիքոն» 66 կէտով կը շարունակէ գլխաւորել մրցաշարային աղիւսակը: Երկրորդ տեղը ընթացող Մատրիտի «Ռեալը» ետ է 3 միաւոր: «Սեւիլիան» չորրորդն է՝ 58 միաւոր:

Ասենսիոյի Եւ Բենգեմայի Կոլերը Յաղթանակ Բերին «Ռեալին»

Սպանիոյ առաջնութեան 29-րդ հանգրուանին ախոյեան «Ռեալը» տանը մրցեցաւ յետնապահներէն «Էլբարի» հետ: Ֆրանսացի Ջինեդին Ջիդանի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

Աչքի ինկան սպանացի յարձակող Մարկո Ասենսիոն եւ ֆրանսացի յարձակող Քարիմ Բենզեման:

Գուարդիոլա. Սոս Ենք Տիտղոսին, Անհրաժեշտ Է Եւ 3 Յաղթանակ

«Մանչեսթեր Սիթիի» Քաթարնացի գլխաւոր մարզիչ Խոսեպ Գուարդիոլան մեկնաբանած է 2:0 հաշուով յաղթանակը «Լեսթեր Սիթիի» նկատմամբ Անգլիայի առաջնութեան 30-րդ հանգրուանի աւարտին արտագնայ խաղի աւարտին:

Անգլիոյ առաջնութեան տիտղոս նուաճելէ աւելի հաճելի ոչինչ կայ: Մրցաշարը կը տեւէ 11 ամիս, շատ բարդ է: Մենք մօտ ենք տիտղոսին, անհրաժեշտ է եւս երեք յաղթանակ», - Գուարդիոլայի խօսքը կը մէջբերէ BBC-ին:

«Մանչեսթեր Սիթին» 31 խաղէն յետոյ 74 կէտով առաջին տեղը կը գրաւէ:



«Մանչեսթեր Եւրոպայի» Յաղթանակը

Անգլիոյ առաջնութեան 30-րդ հանգրուանին «Մանչեսթեր Եւրոպայի» սեփական դաշտի վրայ մրցեցաւ «Պրայթընի» հետ եւ յաղթանակ տարաւ 2:1 արդիւնքով:

«Մանչեսթեր Եւրոպայի» 60 կէտով կը գրաւէ աղիւսակի երկրորդ տեղը, «Պրայթըն» 16-րդն է՝ 32 կէտ:

Լոնտոնի «Թոթենհեմը» հիւրընկալուեցաւ «Նիուքասլի» կողմէ եւ բաւարարուեցաւ ոչ ոքի արդիւնքով՝ 2:2:

«Թոթենհեմ» 49 միաւորով 5-րդն է, «Նիուքասլը» 17-րդն է՝ 29 միաւոր:

«Ռեալ Սոսիետատ» 34 Տարի Անց Դարձեալ Նուաճեց Սպանիոյ Գաւաթը

Սպանիոյ գաւաթի խաղարկութեան անցած մրցաշրջանի (յետաձգուած էր կորոնավիրուսի պատճառով) տիտղոսը նուաճեց «Ռեալ Սոսիետատը»:

Սեւիլիայի մէջ տեղի ունեցած եզրափակիչի խաղին սպանացի Իմանուէլ Ալգուասիլի գլխաւորած խումբի մրցակից՝ Պիլպոյի «Աթլետիքը» էր, որ պարտուեցաւ նուազագոյն հաշուով:

«Ռեալ Սոսիետատ» երրորդ անգամ դարձաւ Սպանիոյ գաւաթակիր: Առաջին անգամ ահուճքը տիտղոսը նուաճած է 1909 թուականին, երկրորդ անգամ՝ 1987-ին:



«Ինթերը» Յաղթեց Եւ 8 Կտով Առաջ Է «Միլանէն»

Իտալիոյ առաջնութեան 29-րդ հանգրուանի առաջատար «Ինթեր» հիւրընկալուեցաւ «Պոլոնիայէն»: Իտալացի Անտոնիո Կոնտէի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ նուազագոյն հաշուով:

31-րդ վայրկեանին «Պոլոնիայի» բերդը գրաւեց պելճիքացի յարձակող Ռոմելո Լուկակուն:

«Ինթեր» (28 խաղ) 68 միաւորով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ երկրորդ տեղը կը գրաւող «Միլանի» (29 խաղ) նկատմամբ ունի 8 կէտի առաւելութիւն:

29-րդ հանգրուանի միւս մրցումներուն «Աթլանտան» Մրցեցաւ «Ուդինեզի» հետ եւ առաւելութեան Հասաւ 3:2 հաշուով: «Աթլանտան» 58 միաւորով երրորդն է:

2 միաւոր նիւազ ունի չորրորդ տեղը ընթացող «Նափոլին», որ 4:3 հարդիւնքով պարտութեան մատնեց «Քրոտտնէին»:

«Ռոման» արտագնայ խաղի ընթացքին 2:2 արդիւնքով աւարտեց պայքարը «Սասուոլոյի» հետ եւ 51 կէտով 7-րդ տեղը կը գրաւէ: Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը սրունքի մկանային վնասուածքէն յետոյ դեռ կը վերականգնուի եւ կը բացակայէր «Ռոմայի» յայտացուեցակէն:

Ֆոնսեկա. Մխիթարեանի Վիճակը Կը Գնահատենք Յաջորդ Շաբաթ

Իտալական «Ռոմայի» եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանն ապաքինուած է սրունքի մկանային վնասուածքէն յետոյ, սակայն փորձուկալացի Պաուլու Ֆոնսեկայի գլխաւորած խումբի ընդհանուր խումբին հետ դեռ չէ մարզուած, կը հաղորդէ sportmediaset.it-ը:

«Մխիթարեան արդէն կը մարզուի, կը բարելաւէ մարզավիճակը, սակայն անոր վիճակը կը գնահատենք յաջորդ շաբաթ», - ըսած է Պաուլու Ֆոնսեկան:

Ապրիլի 8-ին «Ռոման» Եւրոպայի լիգայի քառորդ եզրափակիչի առաջին խաղին կը հիւրընկալուի Ամստերդամի «Այաքսին»: Այդ խաղին կը սպասուի հայ ֆուտբոլիստի վերադարձը խաղադաշտ: